ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան 2017

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Երևան 2017

Սույն ձեռնարկը ստեղծվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ արտահայտեն ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները և քաղաքականությունը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....4

1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ.....9

2. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 17

3. ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ 26

4. ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՐՁԻ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ 33

5. ՀՀ-ՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ 54

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 68

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերն ընկած են միջազգային իրավաբանության հիմքում: Այդ իրավաբանությունն հստակ է. երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, ուստի պետք է գտնվեն հատուկ և մշտական ուշադրության ներքո՝ առանցքում ունենալով ընտանիքում ապրելու և մեծանալու երեխայի կարևորագույն իրավունքը: Սա է, որ պետք է կազմի ժամանակակից յուրաքանչյուր պետության գործունեության առաջնահերթ առարկան:

Երեխաներն իրենց տարիքային, մտավոր և ֆիզիկական զարգացվածության առանձնահատկություններով համարվում են հատուկ խումբ և ունեն մշտական հոգածության ու պաշտպանության կարիք: Իրականում, երեխաների պաշտպանվածության մակարդակը տարբերվում է երկրից երկիր, իսկ աշխարհի տարբեր մասերում ապրող երեխաները կա'մ լիարժեք պաշտպանված են իրենց բոլոր իրավունքների առումով, կա'մ էլ անգամ կյանքի իրավունքի առումով չունեն պաշտպանվածություն:

Հատկապես անցումային հասարակություններում երեխաները մշտապես կրում են տնտեսական անկայունության և փոփոխվող սոցիալական միջավայրի բացասական ազդեցությունը, որի հետևանքով ամբողջ սերունդ կարող է հայտնվել ճգնաժամային իրավիճակում: Մինչդեռ, երեխաները յուրաքանչյուր հասարակության և պետության ապագան են, իսկ երեխաների պաշտպանվածության բարձր մակարդակը վկայում է տվյալ հասարակության կամ պետության զարգացվածության և արժանապատվության, ինչպես նաև քաղաքակիրթ և կայուն լինելու մասին:

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ջանքերը ենթադրում են պետական և հասարակական մասնագիտացված կազմակերպությունների, ինչպես նաև առանձին փորձագետների հետ համագործակցված և դրանով պայմանավորված՝ արդյունավետ աշխատանք: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստատությունն այս իմաստով իրականացնում է մշտական և համալիր գործունեություն՝ ուղղված հասարակության խմբերի իրավունքների պաշտպանությանը՝ համագործակցելով այդ բնագավառում գործող միջազգային և տեղական կառույցների հետ, մշակելով և կիրառելով տարբեր սոցիալական խմբերի

ներկայացոցիչների կարիքներից բխող հասցեական աջակցության մեթոդաբանություն:

Երեխայի իրավունքների պաշտպանությունը կազմում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առանցքը: Այս փաստը արձանագրում ստացավ նաև սահմանադրական օրենքի մակարդակով: Մասնավորապես, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 2րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանություն և վերջիններիս խախտումների կանխարգելում»: Սա կարևորագույն նշանակություն ունեցող կարգավորում էր, որ զգալի փոփոխություն բերեց նաև Պաշտպանի գործունեության առաջնահերթությունների համակարգում: Այդ ուղղությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից մշտապես իրականացվել է ինստիտուցիոնալ և գործընթացային քայլեր, որոնք միտված են ամրապնդելու երեխայի իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ օրենսդրական հենքերի և համապատասխան կառույցների ամրապնդումը, երեխայի իրավունքների ապահովման գործիքարանի շտկումը և արդիականացումը, մասնագիտական ներուժի հասցեական կիրառումն ու համագործակցությունը բոլոր շահագրգիռ կողմերի հետ:

Երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը ելնում է հայաստանյան հասարակության մեջ սերնդեսերունդ փոխանցվող՝ երեխաների հանդեպ հատուկ ուշադրության, սիրո և խնամքի ավանդույթներից, հայկական ընտանիքի՝ որպես արժեքի, պաշտպանության կարևորությունից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև երեխաների լավագույն շահի հաշվառմամբ նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանության անհրաժեշտությունից՝ Պաշտպանի աշխատակազմում ստեղծվել է երեխաների իրավունքների պաշտպանության բաժին: Բաժնի գործունեության կարևորագույն ուղղություններից է հենց փակ հաստատություններում

երեխաների իրավունքների պաշտպանությանն առնչվող հարցերը: Ուստի, այդ վայրերում գտնվող երեխաները պետք է անարգել հնարավորություն ունենան դիմելու և ստանալու Մարու իրավունքների պաշտպանի աջակցությունը իրենց իրավունքների պաշտպանության հարցում:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի գործունեության համակարգում երեխաների իրավունքների պաշտպանության հարցեր քննարկելիս անդրադարձ է կատարվել նաև համապատասխան միջազգային փորձին: Ուսումնասիրված և ստորև ներկայացված է Արևմտյան և Արևելյան Եվրոպայի երկրների (Անգլիա, Իռլանդիա, Նորվեգիա, Հունգարիա, Չեխիա, Սլովակիա, Լատվիա, Լիտվա, Սերբիա, և այլն), ինչպես նաև հետխորհրդային որոշ երկրների (ՌԴ, Վրաստան) մարդու իրավունքների հաստատությունների՝ երեխաների կողմից և երեխաների իրավունքների խախտումների վերաբերյալ դիմում կամ բողոք ստանալու, համապատասխան տեղեկատվության ստացման, երեխաների՝ լսված լինելու իրավունքի պաշտպանության մեխանիզմները: Այդ երկրներում այդ մեխանիզմները մշակվել և ներդրվել են՝ հաշվի առնելով երեխաների իրավունքների պաշտպանության շեշտադրումը, այդ հասարակությունների սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև կարևորվել է երեխաների՝ լսված լինելու իրավունքի ապահովման անհրաժեշտությունը: Պետք է նշել, որ ուսումնասիրված երկրների փորձը տարբեր է ինչպես մոտեցումների, այնպես էլ ծավալների, ընդգրկման, մեխանիզմների ընտրության և կիրառման տեսանկյունից: Միջազգային արդյունավետ փորձի ուսումնասիրությունը և այլ պետություններում առկա ուժեղ և թույլ կողմերի հաշվարկումը կարող է նպաստել ՀՀ-ում համապատասխան մեխանիզմների ներդրման արդյունավետությանը:

Ուսումնասիրման հիմնական առանցքներն են դիտարկվող երկրներում մարդու իրավունքների պաշտպանության ազգային կամ Օմբուդսմանների ինստիտուտների կողմից կիրառվող մոտեցումները, ընթացակարգերը, ուսումնասիրվող երկրներում համապատասխան իրավական հենքերի, դրանց կիրառման առանձնահատկությունները:

Միևնույն ժամանակ, երեխաների իրավունքների պաշտպանության հետ կապված կարիքների գնահատման նպատակով իրականացվել են թեմատիկ քննարկումներ տարբեր դպրոցներից ընտրված շուրջ 40 երեխայի հետ, որոնք ակտիվորեն մասնակցում են երեխաներին հուզող հիմնախնդիրների քննարկումներին, երեխաների իրավունքներին ուղղված նախաձեռնություններին և իրենց սոցիալական խմբում հանդիսանում են կարծիքի առաջնորդներ[1]: Երեխաների հետ իրենց իրավունքների պաշտպանվածության հիմնախնդիրների քննարկումը թույլ տվեց հստակեցնել Հայաստանում երեխաներին շրջապատող սոցիալական միջավայրում իրենց իրավունքներին սպառնացող տարբեր գործոններ, ինչպես նաև դուրս բերել փաստեր, որոնք վկայում են երեխաներին շրջապատող սոցիալական տարբեր խմբերում իրենց իրավունքների խախտման ռիսկայնության մասին: Միևնույն ժամանակ, հատուկ մեթոդի կիրառմամբ երեխաների հետ քննարկվել են իրենց՝ լսված լինելու, բողոքարկելու իրավունքների իրացման, մասնագտական խորհրդատվություն ստանալու հնարավոր և իրենց համար առավել մատչելի, ցանկալի մեխանիզմները:

Բացի այդ, հաշվի առնելով ՀՀ-ում երեխաների պաշտպանության բնագավառում գործող տարբեր կազմակերպությունների տեղայնացված փորձը, այն քննարկվել է ոլորտի փորձագետների հետ, որոնց հետ քննարկման ընթացքում փորձ է կատարվել պարզել.

- ✓ Հայաստանում երեխայի իրավունքների պաշտպանության թիրախային հիմնահարցերը, ինչպես նաև սոցիալական միջավայրում երեխայի իրավունքների խախտման հիմնական օջախները (կրթական հաստատություններում մեծեր և հասակակիցներ).
- ✓ երեխայի իրավունքների խախտման բնույթն ու դրսևորումները (երեխայի հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնությունը, հասակակիցների կողմից հալածանքը (bullying) և այլն).

[1] Մասնավորապես, հարցված երեխաներն ընդգրկված են World Vision Armenia-ի կողմից նախաձեռնված՝ Impact և SKYE club-ներում, տե՛ս՝ http://www.wvi.org/armenia/youth-empowerment: Բացի այդ, հիմնախնդիրը քննարկվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ պարբերաբար այցելող և պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կազմակերպվող քննարկումներին մասնակցող դպրոցականների հետ:

- ✓ ՀՀ-ում երեխաների կողմից իրենց իրավունքների գիտակցման մակարդակն ու իրացման մեխանիզմները, դրանցից օգտվելու հնարավորությունները.
- ✓ փորձագետների կարիքները՝ կապված ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հետ համագործակցության հետ:

Զեկույցում ամփոփ ներկայացված են եզրակացություններ և առաջարկություններ, որոնք կարող են նպաստել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի, ինչպես նաև այլ շահագրգիռ կազմակերպությունների կամ կառույցների կողմից երեխայի իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացմանը:

1. ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության և ըմբռնման մթնոլորտում:

Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը պետության առջև դրված խնդիրներից մեկն է, քանի որ ընտանիքում ապրելը և պատշաճ դաստիարակություն ստանալը կարևոր երաշխիք է երեխայի մյուս իրավունքների իրացման և երեխայի զարգացման համար:

Ստորագրելով ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա)[2]՝ մասնակից երկրները պարտավորվել են հարգել երեխաների իրավունքները և իրականացնել համապատասխան միջոցառումներ՝ արձագանքելու երեխաների իրավունքների խախտումների դեպքերին: Կոնվենցիայի առաջին մասով, ինչպես նաև վերջինիս կից կամընտիր արձանագրություններով սահմանվում են երեխաների իրավունքների պաշտպանությունն ապահովող համապատասխան պարտավորությունները: Կոնցենցիայի 12-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է, որ իր հայացքները ձևակերպելու ընդունակ երեխայի համար մասնակից պետություններն ապահովում են դրանք ազատորեն արտահայտելու իրավունք այն բոլոր դեպքերում, որոնք վերաբերում են երեխային: Երեխայի հայացքների նկատմամբ ցուցաբերվում է նրա տարիքին և հասունությանը համապատասխան պատշաճ ուշադրություն:

Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ այդ նպատակով երեխային, մասնավորապես, հնարավորություն է տրվում իրեն վերաբերող ցանկացած դատական կամ վարչական քննության ժամանակ, ներպետական օրենսդրության դատավարական նորմերով նախատեսված կարգով, ունկնդրվել թե՛ անմիջականորեն, թե՛ իր ներկայացուցչի կամ համապատասխան մարմնի միջոցով:

[2] Ընդունված 20.11.1989թ. Նյու Յորքում, ՄԱԿ-ի կողմից:

Ընտանիքին՝ որպես հասարակության հիմնարար խմբային միավորի, և նրա բոլոր անդամների ու հատկապես երեխաների աճի ու բարեկեցության բնական միջավայրի, պետք է ցուցաբերվի անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որպեսզի կարողանա լիարժեք կերպով ստանձնել իր պարտականությունները հասարակության շրջանակներում[3]:

Ընտանիքում ապրելը երեխային հնարավորություն է տալիս զարգանալ և մեծանալ՝ որպես հասարակության լիարժեք անդամ, ով մասնակցություն կունենա նաև պետության կառավարման գործընթացին: Այս առումով, կարևոր է, որպեսզի պետությունում և հասարակությունում հարգվի նաև ծնողների՝ իրենց երեխային դաստիարակելու իրավունքը: «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետությունը պետք է հարգի ծնողների պատասխանատվությունը, իրավունքները և պարտականությունները՝ երեխայի զարգացող ունակություններին համապատասխան ուղղություն տալու երեխային՝ նրա կողմից Կոնվենցիայով ճանաչված իրավունքներն իրականացնելիս:

Ցավոք, միշտ չէ, որ երեխաները հնարավորություն ունեն ապրելու ընտանիքում: Տարբեր հանգամանքների բերումով նրանք կարող են հայտնվել նաև հատուկ հաստատություններում, ազատությունից զրկման վայրերում և այլն: Այս վայրերում երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը ստանում է առավել մեծ արդիականություն: Այս իմաստով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հիմնարար ուղղություններից է նաև այդ վայրերում երեխաների իրավունքների խախտումներին օպերատիվ և հասցեական արձագանքելու մեխանիզմների ստեղծմանն ու կիրառմանը:

Սա հատկապես վերաբերում է երեխաներին շրջապատող սոցիալական միջավայրում նրանց իրավունքների պաշտպանության արդիականությանը, որը պայմանավորված է վերջին տասնամյակներում հայաստանյան հասարակության անցումայնությամբ, ազգային արժեքների հետ մեկտեղ առաջ եկած և տարբեր գործոնների ազդեցության հետևանքով արագ տարածվող հարարժեքների տարածման փաստով: Մասնավորապես, քրեական բարքերի և կոնֆլիկտայնության դրսևորումները բակում, դպրոցում, դրանց մշտական

[3] ՄԱԿ-ի 1989 թվականի նոյեմբերի 20-ի «Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա», Պրեամբուլա, http://www.arlis.am/DocumentView.aspx?docID=60503

ցուցադրումը և դրանք կրողների հերոսացումը ԶԼՄ-ներում ստեղծում են երեխաների իրավունքների խախտման պրակտիկ նախադեպեր և մեծացնում հետագայում երեխաների հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնության ռիսկեր:

Նման ռիսկեր հատկապես առնչվում են փակ հաստատություններում գտնվող անչափահասների հետ, ովքեր, զրկված լինելով լիարժեք ծնողական խնամքից և ունենալով այլ երեխաների հետ համեմատած էապես ավելի սակավ հաղորդակցական հնարավորություններ, համապատասխանաբար զրկված են նաև իրենց իրավունքները սեփական և այլոց աջակցությամբ պաշտպանելու, բողոքելու և լսված լինելու իրավունքներից:

Երեխաների իրավունքների պաշտպանության հիմքում ընկած է «երեխայի լավագույն շահ» հասկացությունը, որի համաձայն երեխաների շահերը գերակա արժեք են: Այսպես, ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածում ամրագրված է. «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»[4]: Նույն իրավունքից օգտվում են ազատազրկված, հատուկ հաստատություններում հայտնված երեխաները, որոնք լավագույն շահը նույնպես պետք է պետության և համապատասխան հաստատությունների կողմից երաշխավորված լինի[5]:

ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 18-րդ հոդվածով ամրագրված է, որ կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է գործադրեն բոլոր հնարավոր ջանքերը՝ երեխայի դաստիարակության և

---

[4] http://www.un.am/res/UN%20Treaties/III_12.pdf, էջ 3:

[5] Այսպես, ՄԱԿ-ի՝ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 37-րդ հոդվածի (գ) կետով ամրագրված է, որ «ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա օգտվի մարդասիրական վերաբերմունքից և մարդկային անօտարելի արժանապատվության նկատմամբ հարգանքից՝ հաշվի առնելով նրա տարիքի անձանց պահանջմունքները: Մասնավորապես, ազատությունից զրկված յուրաքանչյուր երեխա պետք է առանձնացվի մեծահասակներից, եթե միայն չի համարվում, որ երեխայի լավագույն շահերից ելնելով, հարկավոր չէ այդ անել և պետք է իրավունք ունենա կապ պահպանել իր ընտանիքի հետ՝ նամակագրության և տեսակցությունների միջոցով, բացառությամբ հատուկ հանգամանքների»: Նույն տեղում, էջ 17:

զարգացման գործում երկու ծնողների ընդհանուր պատասխանատվության սկզբունքի ճանաչումն ապահովելու համար:

Նշվածն, ըստ էության, ներկայացնում է լսված լինելու իրավունքը, որից էլ ածանցվում է իրավունքների խախտումների վերաբերյալ բողոք ներկայացնելու իրավունքը, որը տարբեր կերպ է իրացված Կոնվենցիայի մասնակից երկրներում:

Օրինակ՝ փակ հաստատություններում գտնվող երեխաները պետք է հնարավորություն ունենան բարձրաձայնելու այն դեպքերի մասին, երբ խախտվում են իրենց իրավունքները: Երեխաների կողմից իրենց իրավունքների խախտման մասին բողոք ներկայացնելը լսված լինելու իրենց իրավունքի իրականացման ձևերից մեկն է:

Այս առումով, պետական յուրաքանչյուր վերաբերելի մարմնին բողոք ներկայացնելով՝ երեխան բացի այլ իրավունքներից, իրացնում է իր՝ լսված լինելու իրավունքը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն իր՝ Բռնության բոլոր ձևերից երեխայի պաշտպանված լինելու իավունքի վերաբերյալ թիվ 13 Ընդհանուր մեկնաբանության մեջ նշել է, որ, պետությունները պետք է ունենան երեխաների պաշտպանության՝ անվտանգ և պատշաճ հրապարակված մեխանիզմներ, որպեսզի երեխաները և այլ անձիք կարողանան ահազանգել, երբ երեխայի նկատմամբ բռնության դեպք է տեղի ունենում[6]:

Կոմիտեն նշել է նաև, որ շուրջօրյա հեռախոսահամարի գործելը կարող է լինել այդ մեխանիզմներից մեկը:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների թիվ 12 Ընդհանուր մեկնաբանության համաձայն[7]՝ բոլոր այն գործընթացներում, որտեղ ներգրավված են երեխաները պետք է հարգվեն հետևյալ 9 սկզբունքները.

---

[6] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/CRC.C.GC.13_en.pdf

[7] Երեխայի լսված լինելու իարվունքը, Երեխայի իրավունքների կոմիտե, 2009 թվական, http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/AdvanceVersions/CRC-C-GC-12.pdf

1. Թափանցիկություն և տեղեկացվածություն

Երեխաները պետք է տեղեկացված լինեն իրենց լսված լինելու իրավունքի վերաբերյալ:

2. Կամավորություն

Երեխային չպետք է պարտադրել, որպեսզի նա հայտնի իր կարծիքը:

3.Հարգանք

Երեխայի կարծիքը պետք է հարգել:

4. Վերաբերելիություն

Երեխայի հայտնած կարծիքը պետք է իրական կապ ունենա իր կյանքի հետ: Ավելին, երեխան պետք է կարողանա հայտնել իր կարծիքը այն խնդիրների մասին, որոնք հենց իր կարծիքով կարևոր են իր համար:

5. Երեխայակենտրոն միջավայր և աշխատելու մեթոդներ

Երեխաների հետ աշխատելու մեթոդները պետք է լինեն երեխաների համար հարմարեցված, քանի որ երեխաներն ունեն տարբեր կարիքներ և նրանք պետք է պատրաստ լինեն, որպեսզի կարողանան արտահայտել իրենց կարծիքը:

6. Ներառականություն

Երեխայի մասնակցությունը պետք է լինի նեռարական, այսինքն՝ պետք է բացառվի ցանկացած տեսակի խտրականություն: Երեխաները մեկ ընդհանուր խումբ չեն և նրանք պետք է ունենան հավասար հնարավորություններ՝ իրենց անհատականությունը հաշվառմամբ:

7. Երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստում

Երեխաների հետ աշխատող անձիք պետք է վերապատրաստվեն, որպեսզի կարողանան ճիշտ շփվել երեխաների հետ: Այս հարցում հենց երեխաների մասնակցությամբ վերապատրաստումը կարող է արդյունավետ լինել:

8. Անվտանգության ապահովում

Երեխան իր կարծիքը արտահայտելիս պետք է համոզված լինի, որ նրան վտանգ չի սպառնա եթե նա խոսի իրեն հուզող հարցերից:

9. Հետևողականություն

Ցանկացած խորհրդատվական գործընթաց պետք է լինի հետևողական և երեխաները պետք է տեղեկացված լինեն, թե ինչպես իրենց կարծիքը լսեցին և հաշվի առան:

1993 թվականին, Կոնվենցիայի վավերացմամբ, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվեց իր օրենսդրությունը համապատասխանեցնել Կոնվենցիայի դրույթներին: Կոնվենցիայի վավերացմամբ Հայաստանը նաև ճանաչեց, որ երեխան իր անհատականության լիակատար և բազմակողմանի զարգացման համար պետք է մեծանա ընտանեկան միջավայրում, երջանկության, սիրո և ըմբռնման մթնոլորտում և լիարժեք պաշտպանված լինի:

Երկրի բարեկեցության ամենակարևոր նախադրյալն երեխաների շահերին նպատակաուղղված պետական քաղաքականությունն է: Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 37-րդ հոդվածում: Մասնավորապես, այդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ կանոնավոր անձնական փոխհարաբերություններ և անմիջական շփումներ պահպանելու իրավունք, բացառությամբ այն դեպքի, երբ դա, դատարանի որոշման համաձայն, հակասում է երեխայի շահերին:

1996 թվականին ՀՀ-ում ընդունվել է «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը, որը նպաստեց, որպեսզի ՀՀ-ում ձևավորվի երեխաների իրավունքների պաշտանության համակարգը: Երեխայի իրավունքների և շահերի պաշտպանության միասնական պետական քաղաքականության իրականացման և համակարգման առումով կարևորագույն ձեռքբերումներից է երեխաների պաշտպանության եռաստիճան համակարգի ստեղծումը:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ընտանիքում ապրելու և դաստիարակվելու, իր ծնողներին ճանաչելու, նրանց հոգատարությանն արժանանալու (որքան դա հնարավոր է), նրանց հետ համատեղ ապրելու իրավունք, բացառությամբ այն դեպքերի, երբ դա կարող է հակասել երեխայի շահերին: Երեխան ունի նաև իր ծնողներից դաստիարակություն ստանալու, նրա շահերի ապահովության, համակողմանի զարգացման, նրա մարդկային արժանապատվությունը հարգելու, ինչպես նաև ֆիզիկական, մտավոր, հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմաններ ունենալու իրավունք:

ՀՀ-ում երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքն ամրագրված է նաև «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով: Օրենքի 12-րդ հոդվածի

համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի իր ծնողների հետ համատեղ ապրելու իրավունք՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այն դեպքերի, երբ դատարանի որոշմամբ ծնողներից կամ ծնողից երեխայի բաժանումը համարվում է անհրաժեշտություն՝ ելնելով երեխայի շահերից: Պետությունն ու նրա համապատասխան մարմինները պետք է նպաստեն ընտանիքի վերամիավորմանը:

Այնուամենայնիվ, չնայած վերը նշված համակարգի ստեղծմանը՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում դեռևս կան խնդիրներ, որոնց մասին նշվել է թե՛ մի շարք տեղական և միջազգային կազմակերպությունների, թե՛ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից:

ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեն դեռևս 2013 թվականին իր ամփոփիչ դիտարկումներում նշել է, որ մտահոգության տեղիք տվող խնդիրներից է նախևառաջ օրենսդրությունը: Դիտարկումներում նշվում է, որ Կոմիտեին մտահոգում է նաև երեխաների իրավունքների ոլորտում արդեն իսկ գործող օրենքների և իրավակարգավորումների անբավարար իրագործումը և կիրարկումը:

Կոմիտեն նշել է նաև, որ այդ գործում Հայաստանի Հանրապետությունը պետք է համապատասխան քայլեր ձեռնարկի ընտանիքում, դպրոցում, խնամք իրականացնող հաստատություններում և դատարաններում իրեն վերաբերող հարցերում երեխայի կարծիքը հարգելու ուղղությամբ: Կոմիտեն առաջարկել է նաև, ունենալ Երիտասարդական պառլամենտ և խթանել երեխաների մասնակցությունը պառլամենտում:

Հաշվի առնելով իր իսկ թիվ 2 Ընդհանուր մեկնաբանությունը մարդու իրավունքների անկախ կառույցների դերի մասին երեխայի իրավունքների պաշտպանության և խթանման գործում՝ Կոմիտեն խորհուրդ է տվել նաև քայլեր ձեռնարկել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի ստեղծման ուղղությամբ:

Վերոգրյալ մեկնաբանությունում նշված է նաև, որ յուրաքանչյուր պետություն պետք է ունենա մարդու իրավունքների անկախ կառույց, որն էլ իր

հերթին կունենա երեխաների իրավունքների պաշտպանության և խթանման լիազորություն[8]:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն, որ ժամանակակից պետությունների առջև ծառացած կարևորագույն խնդիրներից մեկը երեխայի իրավունքների պաշտպանությունն է՝ 2016 հունիսից ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում, ինչպես վերը նշվել է, գործում է Երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող բաժինը (այս մասին առավել մանրամասն ներկայացվում է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությանը վերաբերող գլխում):

[8] Տե՛ս մանրամասն, http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

2. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Մարդու իրավունքների ազգային հաստատությունը (Օմբուդսման) ՀՀ-ում ներդրվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2003 թվականի հոկտեմբերի 21-ի օրենքով: Այն փաստացի սկսել է գործել 2004 թվականից՝ կրելով **«Մարդու իրավունքների պաշտպան»** անվանումը: Տարիների ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանի և նրա աշխատակազմի գործունեությունը զգալի զարգացում է ստացել տարբեր ոլորտներում, այդ թվում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում: Այս առումով, գործնական աշխատանքին զուգահեռ, վերջերս արձանագրվել է նաև օրենսդրական զարգացում այս ոլորտում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքին: Այդ օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես արդեն վերը նշվել է, սահմանում է, որ Մարդու իրավունքների պաշտպանն իրականացնում է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի՝ 1989 թվականի նոյեմբերի 20-ին ընդունված կոնվենցիայի դրույթների կիրառության մշտադիտարկում, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանություն և վերջիններիս խախտումների կանխարգելում[9]:

Նույն օրենքի 30-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանն իրավասու է իրականացնել պարբերական, ինչպես նաև ըստ անհրաժեշտության անարգել այցեր երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ, ինչպես նաև հանրակրթական ուսումնական հաստատություններ, հանդես գալ երեխայի իրավունքներին առնչվող հատուկ հրապարակային զեկույցներով և իրավասու մարմիններ ներկայացնել երեխաների իրավունքներին վերաբերող իրավական ակտերի կամ դրանց նախագծերի կամ պրակտիկայի կատարելագործման վերաբերյալ առաջարկություններ:

[9] http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/legislation/a9bc11fa30fa490f687b53605076d6d4.pdf

ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում կարևոր առաջընթաց է սույն օրենքով ամրագրված՝ Պաշտպանի և նրա աշխատակազմում պաշտոն զբաղեցնող անձանց կամ կանխարգելման ազգային մեխանիզմի փորձագետների գործունեության համար ավելի բարձր երաշխիքների ստեղծումն ու այդ գործունեությանը խոչընդոտելու համար քրեական և վարչական պատասխանատվության ենթարկելը[10]:

Վերոնշյալ օրենսդրական և Մարդու իրավուքների պաշտպանի աշխատակզմի կառուցվածքային փոփոխություններն ուղղված են նպաստելու ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների լուծմանն ու երեխաների իրավունքների արդյունավետ իրականացման ապահովմանը:

Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված գործունեության և, մասնավորապես, երեխայի իրավունքների պաշտպանության նպատակով իրականացվող ծրագրերի իրագործման ընթացքում ՀՀ Մարդու իրավուքների պաշտպանը մշտապես համագործակցում է այդ ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների և անկախ փորձագետների հետ: Այդ համագործակցությունը նպաստում է մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում համալիր մոտեցումների կիրառմանը, փորձի և ստացված տվյալների փոխանակմանը:

Պաշտպանին կարող են դիմել այն անձինք (այդ թվում՝ երեխաները և/կամ նրանց օրինական ներկայացուցիչները), ում իրավունքները խախտվել են ՀՀ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից: Պաշտպանին ուղղված բողոքները կարող են հասցեագրվել գրավոր կամ բանավոր (օրինակ՝ Պաշտպանի կամ նրա աշխատակազմի ներկայացուցիչների հետ առանձնազրույցի ընթացքում կամ թեժ գծի միջոցով): Չնայած Պաշտպանին բողոքներ հասցեագրելու մեխանիզմը գործում է արդեն երկար տարիներ, շատ անձինք, այդ թվում՝ փակ հաստատություններում գտնվողները և հատկապես՝ երեխաները տեղյակ չեն, թե ինչպես և որ դեպքում կարող են իրենց բողոքն ուղղել Պաշտպանին: Այդ

[10] Հոդված 10 և 11, http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/legislation/a9bc11fa30fa490f687b53605076d6d4.pdf

մասին իր եզրափակիչ դիտարկումներում մտահոգություն է հայտնել նաև ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների կոմիտեն[11]:

Իրավուքների պատշաճ իրացման համար, վերջիններիս խախտումները շտկելու իրավական մեխանիզմները պետք է լինեն հասանելի: Այդ պահանջը նշված է Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում և մարդու իրավունքներին վերաբերվող այլ միջազգային փաստաթղթերում: Երեխաների հատուկ և խոցելի կարգավիճակը հատկապես փակ կամ հատուկ հաստատություններում իրական բարդություններ է ստեղծում իրենց իրավունքների խախտումների վերացման առումով: Հետևաբար, պետությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն, որպեսզի ապահովվեն արդյունավետ, երեխայակենտրոն և երեխաներին ու նրանց ներկայացուցիչներին մատչելի ընթացակարգեր: Ի լրումն այլ միջոցների, այդ գործընթացը պետք է ընդգրկի նաև անկախ բողոքարկման ընթացակարգերի հասանելիությունը: Երեխաները պետք է հնարավորություն ունենան դիմելու Մարդու իրավունքների պաշտպանին և նրան ուղղելու իրենց բողոքները: Երեխաները պետք է տեղյակ լինեն նրա գործունեությանը և տեղեկացված լինեն, թե ինչպես պետք է ներկայացնեն իրենց բողոքը:

Թեև ՀՀ-ում պաշտպանվում է ընտանիքում ապրելու երեխայի իրավունքը, այնուամենայնիվ, 2016 թվականի դեկտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող մանկատներում խնամվում է 635 երեխա, այդ թվում՝ համակարգի երեք մասնագիտացված մանկատներում խնամվող 350 երեխա և 18 տարին լրացած 100 անձ: Նախարարության ենթակայության երեխաների գիշերօթիկ խնամքի հաստատություններում խնամվում է 510 երեխա[12]:

Ավելին, փակ և կիսափակ հաստատություններում[13] երեխաների իրավունքների խախտումները մշտապես արձանագրվել են ՀՀ մարդու

---

[11] http://www2.ohchr.org/english/bodies/crc/docs/co/CRC-C-ARM-CO-3-4.pdf

[12] «2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավիճակի մասին» տարեկան հաղորդում, «Երեխայի իրավունքներ» բաժին, էջ 263, http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf

[13] Սույն զեկույցում «փակ և կիսափակ հաստատություն» հասկացության տակ հասկացվում են ՀՀ-ում գործող հատուկ հանրակրթական դպրոցները, գիշերօթիկ հաստատությունները և մանկատները:

իրավունքների պաշտպանի կողմից պլանային և արտահերթ այցերի ընթացքում:

Այսպես, Պաշտպանի՝ 2014թ. «Երեխայի իրավունքները մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններում. Համակարգային վերլուծություն» արտահերթ զեկույցում[14] հատուկ անդրադարձ է կատարվել փակ և կիսափակ հաստատություններում երեխաների իրավունքների սահմանափակմանը և երեխաների նկատմամբ բռնությունների կիրառման դեպքերին: Ըստ այդ զեկույցի՝ որպես «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ» կոնվենցիայի Կամընտիր արձանագրությամբ նախատեսվող ազգային կանխարգելման մեխանիզմ՝ «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը (…) մշտապես իրականացրել է կանոնավոր մշտազննում և այցեր մանկական խնամքի և հատուկ ուսումնական հաստատություններ, մասնավորապես՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության, Երևանի քաղաքապետարանի, մարզպետարանների ենթակայության տակ գործող հատուկ հանրակրթական դպրոցներ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության տակ գործող, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություններ և մանկատներ: Մշտազննման արդյունքում մշտապես արձանագրվել է, որ գրեթե բոլոր գիշերօթիկ հաստատությունների սաները հայտարարել են հանրակրթական դպրոցներում իրենց հանդեպ խտրական վերաբերմունքի մասին, որն իրենց նկատմամբ անգամ վատ վերաբերմունքի և արժանապատվությունը նվաստացնելու դրսևորումներ ունի»:

Այցերի ընթացքում արձանագրվել են նաև երեխաների նկատմամբ վատ վերաբերմունքի, այդ թվում՝ ծեծի, բռնության դրսևորումներ[15]: Հաստատություններից մեկում երեխաները պատմեցին, որ լոգանք ընդունում են միայն այն երեխաները, ովքեր գիշերում են հաստատությունում նաև շաբաթ

[14]Հրապարակվել է 2015 թվականին http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/47f11a7aaf7697321fbb9952c536f36a.pdf

[15] Նրանք այցի ընթացքում արձանագրել են, թե ինչպես է դասապատրաստման սենյակներից մեկում դաստիարակն ապտակել երեխաներից մեկին: ԲԿԱՄ փորձագետների՝ դասասենյակ մտնելուն պես ներկաները ժխտել են տվյալ փաստը, իսկ դաստիարակը պարզաբանել է, թե քաշել է երեխայի հագուստից ու հրահանգել նստել տեղը: Առանձնազրույցի ընթացքում երեխաներն հայտարարել են իրենց նկատմամբ բռնության այլ ձևերի կիրառման մասին: (օր՝ դասերի ժամանակ քանոնով հարվածել, հագուստից քաշել, հրել և այլն): Հատկանշական է, որ երեխաներն առանձնազրույցների ժամանակ արդարացնում էին դաստիարակների նման պահվածքը, ընդունելի համարում ապտակելը, հարվածելը, քանի որ դրանք ընկալում էին որպես դաստիարակման միջոցներ:

և կիրակի օրերին, իսկ մնացած օրերին երեխաներին թույլատրվում է լվանալ միայն ոտքերը՝ առաջարկելով լոգանքն ընդունել տանը: Սանիտարական նորմերի և կանոնների չպահպանման մասին պատմել են նաև մեկ այլ հաստատության երեխաներ: Ըստ հաստատության սաների՝ իրենց սպորտային համազգեստները, վերնազգեստները, որոնք հանձնվում են լվացքատուն, երբեմն չեն վերադարձվում: Երեխաները նշում էին նաև հաստատությունում գողության հաճախակի դեպքերի մասին (հեռախոսներ, հագուստ և գումար): Երեխաները բարձրաձայնել են նաև տրամադրվող հիգիենիկ պարագաների սակավության մասին:

Այս առումով հատկապես ուշադրության է արժանի ՀՀ կառավարության 2004թ. օգոստոսի 5-ի թիվ 1324-Ն որոշմամբ հաստատված, «Երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում երեխաների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներ»-ի 7-րդ կետով սահմանված, երեխաների հանդեպ և նրանց միջև բռնության կասկածելի կամ հաստատված դեպքերի գրանցման և իրավասու մարմիններին նման դեպքերի մասին հաղորդումների գրանցամատյաններում առկա դեպքերը ոչ լիարժեք լրացնելու և իրավապահ մարմիններին ոչ միշտ հայտնելու պրակտիկայի մասին հիշատակումը:

Փակ հաստատություններում երեխաների իրավունքների խախտումների դեպքերը մշտապես գտնվել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ուշադրության կենտրոնում: Պաշտպանն իր 2015 թվականի տարեկան զեկույցում և 2016 թվականի տարեկան հաղորդամն մեջ նույնպես անդրադարձել է փակ հաստատություններում երեխաների իրավունքների խախտումների դեպքերի, որոնցում արձանագրված խախտումների վերլուծությունը թույլ չի տալիս այս ոլորտում շոշափելի դրական տեղաշարժերի առկայության մասին հիմնավոր եզրահանգում կատարել:

2016 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդման մեջ տարեկան այցերի ընթացքում արձանագրված հիմնախնդիրների լուծման առումով, մասնավորապես, առաջարկվել է.

1. «հստակեցնել հաստատություններ երեխաների ընդունելության չափորոշիչները՝ բացառելով միայն աղքատության պատճառով երեխաներին հաստատություն տեղավորելը,
2. ստեղծել մասնագիտացված համայնքահեն կենտրոններ, որոնք աջակցություն կցուցաբերեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ կանխարգելելով երեխաների մուտքը հաստատություններ,
3. ավելացնել ֆինանսական հատկացումները նոր խնամատար ընտանիքների ներգրավման նպատակով՝ շեշտը դնելով հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարության վրա,
4. հաստատությունների վերակազմակերպման գործընթացում ընդգրկել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք իրականացնող մանկատները՝ բացառելով նոր հաստատությունների ստեղծումը,
5. պատվիրակման մեխանիզմով ընդլայնել ծառայությունների հասանելիությունը,
6. ներդնել ընտանիքներ վերադարձած երեխաների մոնիտորինգի մեխանիզմ»[16]:

Փակ և այլ տիպի հաստատություններ այցերի ընթացքում մշտապես արձանագրվում են երեխաների իրավունքների տարբեր տիպի խախտումներ: Այսպես, Պաշտպանի աշխատակազմի արագ արձագանքման և Երեխաների իրավունքների պաշտպանության ստորաբաժանումների ներկայացուցիչներն 2016թ-ին այցեր են կատարել «Փոքր Միեր» կրթահամալիր, որոնց ընթացքում արձանագրվել են երեխայի՝ ներպետական օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված իրավունքների խախտումներ: Մասնավորապես, արձանագրվել են երեխայի՝ պատվի և արժանապատվության, բոլոր ձևերի բռնությունից պաշտպանության, անձնական կյանքի անձեռնմխելիության և ընտանիքում ապրելու իրավունքների խախտումներ: Երեխայի իրավունքների տեսանկյունից մտահոգիչ դրույթներ են հայտնաբերվել նաև կրթահամալիրի

[16] http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf

կանոնադրության մեջ: Պաշտպանի՝ սեփական նախաձեռնությամբ հարցի քննարկման արդյունքում ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից, ձեռնարկվել են համապատասխան քայլեր «Փոքր Միեր» կրթահամալիրի սաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ուղղությամբ[17]:

Փակ և կիսափակ հաստատություններում երեխաների իրավունքների խախտումներին անդրադարձել են նաև տարբեր իրավապաշտպան կազմակերպություններ, որոնք, նույնպես, իրականացվող մշտադիտարկումների արդյունքում արձանագրել են երեխաների իրավունքների խախտումներ:

«Փրկենք երեխաներին» հասարակական կազմակերպության կողմից 2015թ. հրապարակված «Երեխաների իրավիճակի վերլուծություն. Հայաստան» զեկույցում հատուկ շեշտադրվել է, որ երեխայի խնամք իրականացնող հաստատություններում չկան անձնակազմի համար մշակված հատուկ կանոնակարգեր, որոնք կկարգավորեն երեխաների հետ հարաբերությունները երեխաների պաշտպանության նպատակով: Բռնություններից պաշտպանված լինելու համապատասխան ազգային ուղղորդման ընթացակարգի բացակայությունը նույնպես «նպաստում է» ստեղծված անցանկալի իրավիճակին: Գործնականում մասնագետները հիմնականում դիմում են սաստելու, ենթարկելու, ավտորիտար կառավարման այլ միջոցների: Արտահայտությունները և ձևակերպումները, որոնք անձնակազմի մի մասը գործածում է երեխաներին և նրանց ծնողներին որակելիս, ուղղակի խախտում է նշանակում էթիկական և մասնագիտական տեսանկյուններից[18]:

Հայաստանի Հանրապետությունում վերջին տարիներին գրանցվել են նաև փակ կամ կիսափակ հաստատություններում երեխաների հարկադիր աշխատանքի և սեռական բռնության դեպքեր:

Այսպես, Ս.Ու.-ն դատապարտվել է 10 տարի ժամկետով ազատազրկման երեխաներին հարկադիր աշխատանք կատարելուն հարկադրելու և հատուկ դպրոցի սաներից մեկի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու համար: Համաձայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի՝

[17] http://pashtpan.am/resources/ombudsman/uploads/files/publications/28731eccde752a30c70feae24a4a7de7.pdf
[18] https://armenia.savethechildren.net/sites/armenia.savethechildren.net/files/library/book-arm.pdf

դատապարտյալը լինելով Նուբարաշենի թիվ 18 հատուկ դպրոցի փոխտնօրեն, շահադիտական նպատակներով ստիպել է նույն դպրոցի սաներին զբաղվել մուրացկանությամբ մոտ 2 տարի շարունակ, ինչպես նաև սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել 14 տարին չլրացած սաներից մեկի նկատմամբ: Հատկանշական է, որ դատավարությունների ժամանակ ցուցմունք տվող վկաները հիշատակում էին նաև տվյալ հաստատությունում բռնությունների դրսևորման այլ դեպքերի մասին:

Մեկ այլ դեպքում Լ.Ա.-ն, դատարանի կողմից մեղավոր է ճանաչվել հատուկ օժանդակ դպրոցի սաների նկատմամբ անառակաբարո գործողություններ կատարելու համար և նախատեսված հանցանք կատարելու մեջ և դատապարտվել 2 տարի ազատազրկման (հետագայում պատիժը Վերաքննիչ դատարանը խստացրել է՝ դարձնելով ազատազրկում 3 տարի ժամկետով): Համաձայն դատավճռի՝ դատապարտյալը, աշխատելով Նուբարաշեն թիվ 11 հատուկ օժանդակ դպրոցում որպես հայերեն լեզվի ուսուցիչ, 2 տարի շարունակ կատարել է անառակաբարո գործողություններ 16 տարին չլրացած դպրոցի աշակերտուհիների նկատմամբ[19]:

«Բյուրեղավանի երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ում հայտնաբերված չարաշահումների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2010-2014 թվականների ընթացքում, պարբերաբար բռնություն է գործադրվել, տնօրենի բնորոշմամբ, «կարգազանց» անչափահաս սաների նկատմամբ՝ նրանց պատճառելով հոգեկան ուժեղ տառապանք: Տուժած երեխաների թիվը հասնում է 14-ի[20]:

Նշվածի կապակցությամբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2016 թվականի տարեկան հաղորդման մեջ առաջարկել է հստակեցնել հաստատություններ երեխաների ընդունելության չափորոշիչները՝ բացառելով միայն աղքատության պատճառով երեխաներին հաստատություն տեղավորելը, ստեղծել մասնագիտացված համայնքահեն կենտրոններ, որոնք աջակցություն կցուցաբերեն հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին՝ կանխարգելելով երեխաների մուտքը հաստատություններ:

[19] http://hra.am/hy/tag/child#
[20] http://forrights.am/?ln=1&id_=16&page_id=7

Պաշտպանի հաղորդմամբ առաջարկվել է նաև ավելացնել ֆինանսական հատկացումները նոր խնամատար ընտանիքների ներգրավման նպատակով՝ շեշտը դնելով հաշմանդամություն ունեցող երեխաների խնամատարության վրա և հաստատությունների վերակազմակերպման գործընթացում ընդգրկել նաև հաշմանդամություն ունեցող երեխաների խնամք իրականացնող մանկատները՝ բացառելով նոր հաստատությունների ստեղծումը: Պաշտպանը նշել է նաև, որ ընտանիքում երեխայի իրավունքի իրացման համար անհրաժեշտ է ներդնել նաև ընտանիքներ վերադարձած երեխաների մշտադիտարկման (մոնիթորինգի) մեխանիզմ[21]:

Այսպիսով, ՀՀ-ում փակ և կիսափակ տիպի ուսումնական հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանվածության ցածր մակարդակը հատկապես վկայում է երեխաների՝ իրենց իրավունքների խախտումների մասին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին բողոքներ ներկայացնելու, իսկ հիմքերի առկայության դեպքում՝ Պաշտպանի կողմից սեփական նախաձեռնությամբ քննարկում սկսելու մեխանիզմների ընդլայնման և կիրառման անհրաժեշտությունը:

Ելնելով վերոգրյալից՝ երեխաները պետք է իրավունք ունենան բողոք ներկայացնելու Պաշտպանին, և հաստուկ կամ որևէ այլ հաստատությունում գտնվող երեխայի համար բողոք ներկայացնելու մեխանիզմները պետք է լինեն մատչելի և դյուրին:

[21] Տե՛ս, նույն տեղում, էջեր 264-265

3. ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ

Արևմտյան Եվրոպայի մի շարք երկներում (Իսպանիա (Կատալոնիա), Ֆրանսիա, Բելգիայի ֆրանսիական համայնք, Հունաստան, Հունգարիա, Լեհաստան և Շվեդիա) օրենսդրությունը չունի Օմբուդսմանի համար նախատեսված հստակ պահանջ՝ ուղղված սեփական իրավունքների պաշտպանության հարցում երեխաների մասնակցությանը[22]: Դրա հետ միասին, Շվեդիայում, օրինակ, գոյություն ունի ոչ ակնհայտ պարտավորություն՝ մշտապես հաղորդակցվելու երեխաների հետ վերջիններիս իրավունքները և հիմնախնդիրները համարժեքորեն ներկայացնելու համար: Անգլիայի համապատասխան ստատուտը սահմանափակում է երեխաների իրավունքների պաշտպանի գործառույթը հետևյալ միակ պարտականությամբ. «Անգլիայում երեխաների տեսակետների և շահերի մասին տեղեկացվածության բարձրացումը»:

Որոշ երկրներ հակառակը՝ օմբուդսմաններից պահանջում են խորհրդակցնել երեխաների հետ և վերջիններիս ներգրավել իրենց գործունեության մեջ (օրինակ՝ Բելգիա (Ֆլանդրիա), Դանիա, Ավստրիա, Անգլիա, Ուելս, Շոտլանդիա, Հյուսիսային Իռլանդիա, Կիպրոս):

Որպես այլընտրանք կամ ի լրումն ունեցած կարգավորումների՝ որոշ երկրներում պահանջվում է, որպեսզի Օմբուդսմանը խրախուսի այլոց կողմից լսվելու երեխաների իրավունքը (Լիտվա, Կիպրոս, Ֆինլանդիա, Մալթա, Անգլիա և Իռլանդիա):

Այս առումով, Շոտլանդիան կարող է օմբուդսմանի համար երեխաների հետ հաղորդակցվելու խիստ պահանջ ամրագրող օրենսդրություն ունեցող երկրի օրինակ ծառայել: Այդ երկրի օրենսդրությունը, մասնավորապես, սահմանում է, որ Երեխաների իրավունքների հանձնակատարը պարտավոր է

[22] Տվյալները վերցված են «Երեխաների մասնակցությունը և երեխաների օմբուդսմանների ինստիտուտները Եվրոմությունում» (The European Network of Ombudspersons for Children (ENOC)) «Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանց» հասարակական կազմակերպության 2008 թվականի զեկույցից:

խրախուսել երեխաների և երիտասարդների ներգրավվածությունը հանձնակատարի աշխատանքներին: Հանձնակատարը, մասնավորապես, պետք է քայլեր ձեռնարկի ապահովելու համար երեխաների և երիտասարդների տեղեկացված լինելը հանձնակատարի գործառույթների, ինչպես նաև այն մասին, թե ինչպես կարող են դիմել Հանձնակատարին և ինչպես Հանձնակատարը կարող է պատասխանել երեխաների բարձրացրած խնդիրներին:

Իր պարտականություններն իրականացնելիս հանձնակատարը պարտավոր է հատուկ ուշադրություն դարձնել երեխաների և երիտասարդների այն խմբերին, որոնք իրենց կարծիքը հասանելի դարձնելու համար չունեն համապատասխան միջոցներ: Հանձնակատարը պետք է նաև պատրաստի և բարելավումների նպատակով մշտական դիտարկման ենթարկի իր աշխատանքում երեխաներին և երիտասարդներին ներգրավելու մարտավարությունը: Օրենքը սահմանում է նաև, որ «Այն բոլոր դեպքերում, երբ հանձնակատարը հրապարակում է զեկույց, որը հատուկ նախատեսված չէ երեխաների կամ երիտասարդների համար, հանձնակատարը պարտավոր է հրապարակել նաև զեկույցի՝ երեխաների համար հարմարեցված (երեխայակենտրոն) տարբերակը»:

Այս առումով Կիպրոսի օրենսդրությունը երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ինստիտուտի համար նախաձեռնություն ցուցաբերելու դրույթներ ամրագրախ երկրի օրինակ է՝ պարտավորեցնելով «վեր հանել և բարձրաձայնել երեխաների կարծիքը այն բոլոր դեպքերում, երբ վերջիններս չեն կարող լսվել»:

Այլ է իրավիճակը Արևելյան Եվրոպայում, որտեղ կարող ենք տեսնել ինչպես պրոակտիվ գործունեություն իրականացնող և օրենքով ամրագրված՝ երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներ, այնպես էլ դրանց բացակայությամբ և կամ էլ առկայությամբ երեխաների պաշտպանությանն ուղղված անուղղակի, միջնորդավորված հաստատությունների օրինակներ:

Այսպես, Հունգարիայի հիմնարար օրենքի 30-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ Հիմնարար իրավունքների հանձնակատարը գործողություններ է ձեռնարկում՝ ուղղված երեխաների հիմնարար

իրավունքների պաշտպանությանը և այդ իրավունքների խախտման դեպքում հանձն է առնում արձագանքելու այդ խախտումներին ու իր լիազորությունների շրջանակներում միջոցներ է ձեռնարկում այդ խախտումները վերացնելու ուղղությամբ[23]:

Հունգարիայի 2011 թվականի CXI օրենքի առաջին հոդվածի համաձայն[24]՝ Հիմնարար իրավունքների հանձնակատարն այդ օրենքի դրույթներին համապատասխան հատուկ ուշադրություն է դարձնում երեխաների և ապագա սերունդների իրավունքներին[25]:

Չեխիայի «Իրավունքների հանրային պաշտպանի մասին» օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ պաշտանի գործողությունների շրջանակն է անձանց իրավունքների պաշտպանությունը պետական մարմինների (և օրենքով ահմանված այլ կազմակերպությունների) թույլ տված խախտումներից կամ անգործությունից: Դրանով իսկ նա նպաստում է մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությանը[26]:

Պաշտպանը լիազորված չէ միջամտելու մասնավոր ոլորտի հարցերին, սակայն, այս սկզբունքից կա մեկ բացառություն: Պաշտպանը կարող է միջամտել մասնավոր ոլորտին առնչվող հարցերին եթե իրեն ուղղված բողոքը խտրական վերաբերմունքի կապակցությամբ է[27]:

Հատկանշական է Սլովակիայի՝ երեխաների իրավունքներով զբաղվող համակարգի ինստիտուցիոնալ կայացվածությունը: Լինելով հետսոցիալիստական երկիր՝ Սլովակիան կարողացել է արդյունավետորեն կառուցել և գործարկել սեփական քաղաքացիների, այդ թվում՝ երեխաների իրավունքների պաշտպանության ժամանակակից մեխանիզմներ:

Սլովակիայում երեխաների պաշտպանության ոլորտում գործում է երկու հաստատություն՝ Սլովակիայի Հանրապետության իրավունքների հանրային պաշտպանը և Սլովակիայի Հանրապետության երեխաների իրավունքների հանձնակատարը:

---

[23]http://www.ajbh.hu/documents/14315/2521732/REPORT+ON+THE+ACTIVITIES+OF+THE+COMMISSIONER+FOR+FUNDAMENTAL+RIGHTS+AND+HIS+DEPUTIES+2015/0700c63b-3ff3-46df-b899-1427587775f9?version=1.0

[24] Ուժի մեջ է մտել 2012 թվականի հունվարին

[25] http://www.ajbh.hu/en/web/ajbh-en/act-cxi-of-2011

[26] http://www.ochrance.cz/fileadmin/user_upload/VOP/Law-on-VOP-II-2016_en.pdf

[27] http://www.ochrance.cz/en/mandate-of-the-public-defender-of-rights/

Իրավունքների հանրային պաշտպանը Սլովակիայի Սահմանադրության 151 ա հոդվածի 1-ին կետի համաձայն՝ անկախ մարմին է, որի լիազորությունների շրջանակն է հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետական մարմինների կողմից այդ իրավունքների և ազատությունների խախտման դեպքերում[28]:

Իրավունքների հանրային պաշտպանի հատատությունից զատ, ինչպես նշվեց, Սլովակիայում գործում է նաև Երեխաների իրավունքների հանձնակատարը: Երեխաների իրավունքների հանձնակատարը երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտի իր գործառույթներն իրականացնում է 2015 թվականից, այն է՝ Սլովակիայի Հանրապետության թիվ 176/2015 «Երեխաների իրավունքների հանձնակատարի և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հանձնակատարի մասին» ակտի ուժի մեջ մտնելուց սկսած: Երեխաների իրավունքների հանձնակատարը ներգրավված է Սլովակիայի կողմից վավերացված միջազգային պայմանագրերով երաշխավորված երեխաների իրավունքների պաշտպանության, աջակցման և խթանման գործում[29]:

Երեխաների իրավունքների հանձնակատարը անկախ պաշտոնատար անձ է, որն իր լիազորություններն իրականացնում է այլ մարմիններից անկախ: Յուրաքաչյուր ոք կարող է դիմել Հանձնակատարին երեխաների իրավունքների խախտման կամ դրա սպառնալիքի առկայության դեպքում:

Հատկանշական է, որ Հանձնակատարը լիազորված է երեխայի կամ երեխաների անունից դիմելու ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեին «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի հաղորդումների ներկայացման ընթացակարգի վերաբերյալ կամընտիր արձանագրությամբ սահմանված դեպքերում[30]:

Ի տարբերություն երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ հաստատությունների՝ Հանձնակատարի լիազորությունների շրջանակը սահմանափակված է երեխաների իրավունքների պաշտպանությամբ:

Լատվիայում երեխաների իրավունքների հարցերով առանձին օմբուդսմանի հաստատություն առկա չէ: Երեխաների իրավունքների

[28] http://www.vop.gov.sk/files/anglicky-nove.pdf
[29] http://www.ohchr.org/Documents/Issues/Children/2030/SlovakRepublic.pdf
[30] Նույն տեղում

պաշտպանության հարցերով զբաղվում է Լատվիայի օմբուդսմանը, որը նաև հանդիսանում է Երեխաների օմբուդսմանների եվրոպական ցանցի անդամ (ENOC)[31]: Օմբուդսմանի աշխատակազմում գործում է Երեխաների իրավունքների հարցերով բաժին, որը զբաղվում է միայն երեխաների իրավունքների պաշտպանությամբ:

Լատվիայում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային օրենսդրական մեխանիզմները հիմնականում սահմանվում են Օմբուդսմանի, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքներով:

Մասնավորապես, «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխան կամ ցանկացած այլ անձ իրավասու է դիմել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործող իրավասու մարմիններին, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե երեխայի ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ, կամ երեխայի խնամքով կամ ուսմամբ զբաղվող մարմնի աշխատակիցը խախտում է երեխայի իրավունքները:

«Օմբուդսմանի մասին» օրենքի 12-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ Օմբուդսմանը նույն օրենքով նախատեսված իր գործառույթները իրականացնելիս ընդունում և քննում է մասնավոր անձանցից ստացված դիմումները: Նույն օրենքի 13-րդ հոդված 4-րդ մասի համաձայն՝ Օմբուդսմանն իր լիազորությունները իրականացնելիս իրավասու է երեխայի ցանկությամբ լսել նրա կարծիքը իր ծնողների, խնամակալների, ինչպես նաև երեխայի խնամքով կամ ուսմամբ զբաղվող մարմնի աշխատակցի բացակայությամ:

[31] http://enoc.eu/?page_id=210

Ի տարբերություն Լատվիայի, Լիտվայում գործում է Երեխաների իրավունքների հարցերով առանձին օմբուդսմանի ինստիտուտ, որը ստեղծվել է 2000 թվականին: Երեխաների իրավունքների պաշտպանության հարցերը հիմնականում սահմանվում են Երեխաների օմբուդսմանի մասին Լիտվայի օրենքով: Մասնավորապես, օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխաների օմբուդսմանը քննում է ներկայացված ցանկացած բողոք, որը վերաբերում է ֆիզիկական կամ իրավաբնական անձանց գործողություններին կամ անգործությանը, որի արդյունքում խախտվում են կամ կարող են խախտվել երեխաների իրավունքները կամ օրինական շահերը, ինչպես նաև այն բողոքները, որոնք վերաբերում են պաշտոնատար անձանց կողմից իրենց լիազորությունների չարաշահմանը և վերաբերում են երեխաների իրավունքներին»:

Երեխաների օմբուդսմանի մասին Լիտվիայի օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ երեխաների օմբուդսմանին բողոք կարող է ներկայացվել նաև երեխայի կողմից: Այդ դեպքում բողոքի ձևական պահանջների պահպանումը պարտադիր չէ:

Էստոնիայում գործում է Արդարադատության կանցլերի հաստատություն: Արդարադատության Կանցլերն անկախ մարմին է, որի հիմնական գործառույթն է՝ նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողության իրականացումը: Վերջինիս կողմից իրականացվում է նաև օմբուդսմանի գործառույթ (գործունեությունը կարգավորվում է 1999 թվականին ընդունված Արդարադատության կանցլերի վերաբերյալ օրենքով): 2011 թվականից վերջինիս կողմից իրականացվում են նաև երեխաների իրավունքների ոլորտում օմբուդսմանի գործառույթներ[32]: Արդարադատության կանցլերի մասին օրենքի 1-ին հոդվածի 8-րդ կետի համաձայն՝ Արդարադատության կանցլերը «Երեխաների իրավունքների մասին» կոնվենցիայի 4-րդ հոդվածին համապատասխան իրականացնում է երեխաների իրավունքների պաշտպանության գործառույթ[33]: Օրենքով երեխաների իրավունքների պաշտպանության առանձնահատուկ մեխանիզմներ նախատեսված չեն:

[32] https://www.crin.org/en/library/publications/estonia-childrens-ombudsperson
[33] https://www.riigiteataja.ee/en/eli/507042016001/consolide

Օրենքի 20-րդ հոդվածի համաձայն՝ կանցլերին դիմելու ձևը և ընթացակարգային կարգերը հաստատվում են կանցլերի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

4. ՕՄԲՈՒԴՍՄԱՆԻՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՓՈՐՁԻ ՈՒ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ուսումնասիրված միջազգային փորձը՝ երեխաների իրավունքների պաշտպանության համար Օմբուդսմանի կողմից համապատասխան գործիքակազմի ընտրության և կիրառման տեսանկյունից կարելի է տարբերակել ըստ ուղղակի և անուղղակի մոտեցումների: Ուղղակի մոտեցումները կապված են անմիջապես Օմբուդսմանին բողոք ներկայացնելու հետ: Այս մոտեցումը հանդիպում է առավել հաճախ, քան անուղղակի բողոքարկման մոտեցումը, երբ Օմբուդսմանին բողոք ներկայացնելու և իր հետ հաղորդակցվելու համար ստեղծվում են միջնորդ կառույցներ: Մասնավորապես, երեխաների հետ մշտական հաղորդակցման միջոցով Օմբուդսմանի աշխատակազմի ներկայացուցիչները երեխաներին մշտապես տեղյակ են պահում իրենց գործունեության մասին (դպրոցներում և այլ հաստատություններում Օմբուդսմանի գործունեության մասին դասախոսությունների, պաստառների, Օմբուդսմանի աշխատակիցների հետ հանդիպումների միջոցով): Սա կոչված է ապահովելու երեխաների քաջատեղյակությունն իրենց իրավունքների մասին և Օմբուդսմանի կողմից դրանք պաշտպանելու, Օմբուդսմանին դիմելու հնարավորությունների մասին: Օմբուդսմանին բողոք ներկայացնելու կամ հարցադրումներով դիմելու ուղղակի մեխանիզմները կամ մոտեցումները թույլ են տալիս խուսափելու միջնորդավորված շփումից և համարժեք կերպով ընկալելու երեխաներին առնչվող խնդիրները, օպերատիվ արձագանքելու, լինելու հասցեական: Միևնույն ժամանակ, Օմբուդսմանին բողոքելու և իր հետ հաղորդակցվելու համար միջնորդ կառույցների ստեղծումը կարող է նպաստել Օմբուդսմանի գործառույթների իրականացման գործում քաղաքացիական հասարակության լայն շրջանակի ներգրավմանը, միջնորդ կառույցների օգնությամբ քննարկվող հիմնախնդիրների հանդեպ հասարակության լայն շերտերի ուշադրության բևեռացմանը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ առանձին երկրներում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ստեղծված են հիմնական բոլոր

միջոցները, սակայն դրանք հիմնականում ձևական բնույթ են կրում և արդյունավետ չեն՝ Օմբուդսմանի հաստատության ոչ արդյունավետ աշխատանքի կամ հասարակության մեջ առկա սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների արդիականության, մարդու իրավունքների խախտումները բաց քննարկելու մշակույթի բացակայության և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով:

Վերոգրյալով հանդերձ, թե՛ արդյունավետորեն գործող, թե՛ ձևավորման փուլում գտնվող մեխանիզմների քննարկումը կարող է օգտակար լինել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության համակարգում՝ թույլ տալով օգտագործել առաջատար երկրների արդյունավետ փորձն ու խուսափել այլ երկրներում առկա բացթողումներից:

Ստորև ներկայացվում են մի շարք երկրների փորձի կոնկրետ մոդելներ՝ կապված երեխաների իրավունքների պաշտպանության մեխանիզմների հետ:

Նորվեգիա

Նորվեգիայում գործում է Երեխաների օմբուդսմանի հաստատությունը, որը համարվում է առաջին նմանատիպ կառույցը: Այն գլխավորում է անկախ պաշտոնատար անձ, որը նշանակվում է թագավորի կողմից և պաշտոնավարում է 6 տարի ժամկետով:

Օմբուդսմանը ոչ միայն վերահսկողություն է իրականացնում պետական մարմինների կողմից երեխաների իրավունքների պահպանության նկատմամբ, այլ նաև երեխաների համար բարենպաստ հասարակություն կառուցելու նպատակով համապատասխան աշխատանք է տանում պետական մարմինների հետ: Մասնավորապես, Նորվեգիայի օմբուդսմանը՝

- ✓ կազմակերպում է սեմինարներ և դասախոսություններ այն անձանց համար, ովքեր աշխատում են երեխաների հետ կամ նրանց մատուցում են ծառայություններ.
- ✓ դիմում է իշխանություններին, երբ կարծում է, որ երեխայի իրավունքները բավարար չափով պաշտպանված չեն.
- ✓ հայտնում է կարծիքներ օրինագծերի վերաբերյալ.

✓ երեխաների իրավունքների վերաբերյալ տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում այն անձանց, ովքեր դիմում են առցանց եղանակով կամ հեռախոսով և/կամ էլեկտրոնային փոտով.

✓ անմիջական կապի մեջ լինելով և զրուցելով երեխաների հետ՝ տեղեկանում է նրանց խնդիրների մասին և առաջարկներ ներկայացնում որոշում կայացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց:

Ինչպես ցանկացած ոք, երեխան նույնպես կարող է դիմել Օմբուդսմանին: Դիմումները կարող են ներկայացվել առցանց եղանակով, հեռախոսով կամ էլեկտրոնային փոստով:

Օբուդսմանի պաշտոնական կայքն ունի նաև անանուն հարցեր ուղղելու հնարավորություն: Կայքում այցելուները կարող են գտնել նաև տեսահոլովակ, որը նվիրված է երեխաների իրավունքներին: Տեսահոլովակում ներկայացվում են նաև Օմբուդսմանին և այլ պետական մարմիններին դիմելու երեխաների իրավունքի և դրա իրացման եղանակների մասին[34]:

Հունգարիա

Օմբուդսմանի աշխատակազմ բողոք ներկայացնելու եվրոպական փորձի տեսանկյունից հետաքրքրական է Հունգարիան: Այդ երկրի Հիմնարար իրավունքների հանձնակատարը իր լիազորությունների շրջանակներում առանձնակի ուշադրություն է դարձնում երեխաների և ապագա սերունդների իրավունքների պաշտպանությանը:

Ուշագրավ է, որ Հուգարիայի Հիմնարար իրավունքների հանձնակատարը, իր լիազորությունների շրջանակներում, իր նկատառումներն է ներկայացնում օրենքների նախագծերի և երակարաժամկետ ծրագրերի կապակցությամբ, որոնք ուղղակիորեն կարող են ազդել ապագա սերունդների իրավուքների վրա[35]:

Հունգարիայի Հիմնարար իրավունքների հանձնակատարի էլեկտրոնային էջում տեղադրված չէ երեխաների համար մշակված որևէ հատուկ ձև ունեցող դիմում-բողոքի ձև: Մինչդեռ, կայքի այցելուները կարող են,

[34] http://barneombudet.no/english/
[35] Նույն տեղում:

առցանց լրացնելով հատուկ հարց և պատասխան պարունակող թերթիկը, հանդիպում գրանցել մասնագետի հետ[36]:

Թերթիկի առաջին մասի հարցերը վերաբերում են բողոքի բնույթին: Հարցերի միջոցով դիմումատուն նշում է, թե իր բողոքն ում դեմ է, արդյոք իր բողոքի հիմքում ընկած է որևէ օրենսդրական խնդիր, թե՝ ոչ: Անհրաժեշտ է նշել, որ թերթիկը բավական մատչելի ձևով է մշակված և եթե լրացնողը երեխա է, ապա հարցերի պատասխանը չիմանալու դեպքում նա կարող է պարզապես ընտրել «Չգիտեմ» դաշտը:

Թերթիկի մյուս մասում նշվում է դիմումատուի անունը, ազգանունը, հասցեն և հեռախոսահամարը: Կայքի միջոցով այցելուները կարող են առանց հանդիպում պահանջելու համար լրացնել տիպային թերթիկը, որը ևս դյուրին ձև ունի և պահանջում է լրացնողի տվյալները[37]:

Վերը նկարագրված մեխանիզմները մատչելի են, թեև մշակված չեն հատուկ երեխաների համար: Հունգարիայում, ինչպես նաև մի շարք այլ երկրներում գործում է երեխաների համար նախատեսված օգնության հեռախոսահամար[38]:

Չեխիա

Չեխիայի իրավունքների հանրային պաշտպանն իր էլեկտրոնային էջում ունի հատուկ նշան, որն էլ ուղղորդում է դեպի երեխաների համար առավել մատչելի էլեկտրոնային էջ: Այդտեղ նշված է Պաշտպանին դիմելու մի քանի միջոց[39]: Մասնավորապես, Պաշտպանին կարելի է դիմել սովորական նամակով, բողոքի էլեկտրոնային ձևաթուղթը լրացնելով[40], Պաշտպանի գրասենյակ այցելելով կամ զանգահարելով: Բողոքի էլեկտրոնային ձևաթուղթը բավական մատչելի է ներկայացված, ինչը կարող է թույլ տալ երեխաներին ինքնուրույն լրացնել այն՝ նշելով անունը, ազգանունը, հասցեն և էլեկտրոնային փոստը: Հատկանշական է, որ բողոքի էլեկտրոնային ձևաթղթում կա հնարավորություն նշել, թե դիմողը ինչպես է ուզում, որ իր հետ կապ

[36] http://www.ajbh.hu/en/web/ajbh-en/turn-to-ombudsman_form
[37] http://www.ajbh.hu/en/web/ajbh-en/lodge-a-complaint
[38] https://www.youtube.com/watch?v=McSUyChAIPA
[39] http://deti.ochrance.cz/jak-se-na-ochrankyni-obratit/
[40] http://poe.gordic.cz/KVOPCHILD/

հաստատեն՝ էլեկտրոնային փոստով, սովորական փոստով կամ հեռախոսազանգի միջոցով:

Պաշտպանի էջում երեխան կարող է տեղեկանալ, թե ինչպիսի ընթացակարգով է Պաշտպանը քննում իր բողոքը[41]: Այսպես, նշված է, որ բողոքը ստանալուն պես այն մակագրվում է համապատասխան մասնագետին, այնուհետև մեկ շաբաթվա ընթացքում երեխան տեղեկանում է իր բողոքի բովանդակության Պաշտպանի լիազորությունների սահմաններում լինելու վերաբերյալ: Եթե չի նշվել, թե ինչպիսի եղանակ է նախընտրում երեխան իր բողոքի մասին տեղեկանալու կամ մանրամասները քննարկելու համար, ապա մասնագետը ճշտում է, թե որ եղանակն է նրա համար ամենահարմարը:

Պաշտպանը նշում է նաև երեխայի բողոքը քննելու և նրա հետ շփվելու 10 կանոնները.

1. Երեխայի շահերն առաջնահերթ են
2. Երեխայի դիմումին պետք է պատասխանել այնքան շուտ որքան հնարավոր է
3. Երեխայի հետ շփումը պետք է լինի բարիդրացիական և անմիջական
4. Երեխան կարող է խորհուրդ հարցնել ցանկացած հարցի վերաբերյալ առանց ամաչելու
5. Ուշադիր լսել երեխային և փորձել գտնել նրա խնդրի լուծման լավագույն տարբերակը
6. Երեխայի՝ իր իրավունքների պաշտպանության հարցերով դիմելը ողջունվում է
7. Երեխայի հետ շփումը պետք է ընթանա ոչ պաշտոնական ձևով
8. Հնարավոր հստակ և մատչելի ձևով պատասխանել երեխայի հարցերին
9. Երեխային բացատրել իր իրավունքները և պարտականությունները
10. Պարբերաբար տեղեկացնել երեխային իր դիմում-բողոքի քննման ընթացքի մասին:

Չեխիայում գործում են նաև հատուկ ճգնաժամային կենտրոններ, ուր երեխան կարող է զանգահարել և օգնություն խնդրել, երբ նա հոգեբանական

[41] http://deti.ochrance.cz/co-se-bude-dit-s-mym-pripadem/

ծանր իրավիճակում է կամ վիճել է իր ծնողների հետ կամ այլ խնդիր ունի և չի կարող օգնություն խնդրել որևէ մեկից[42]: Այդ կենտրոնների հեռախոսահամարները նշված են Պաշտպանի կայք-էջում[43]:

Հատկանշական է նաև, որ 2016 թվականին Պաշտպանին դիմել է ընդամենը 49 երեխա, իսկ 2015-ին՝ 51: Այդ թիվը այնքան էլ շատ չէ՝ հաշվի առնելով Չեխիայի բնակչության թիվը[44]:

Այնուամենայնիվ, Պաշտպանի մամլո խոսնակը նշել է, որ երեխաները շատ են դիմում այն դեպքերում, երբ իրենց ծնողները ամուսնալուծության գործընթացի մեջ են գտնվում: Երեխաները մտահոգված են, թե երբ այդ գործընթացը կավարտվի, ինչպես իրենք կարող են օգնել իրենց ծնողներին և ինչպես է դատարանը հաշվի առնելու իրենց ցանկությունները[45]:

Սլովակիա

Ինչպես արդեն նշվել է, Սլովակիայում երեխաների պաշտպանության համար ստեղծված են երկու մարմիններ՝ Սլովակիայի՝ իրավունքների հանրային պաշտպանը, և Սլովակիայի՝ երեխաների իրավունքների հանձնակատարը:

Իրավունքների հանրային պաշտպանը Սլովակիայի հանրապետության անկախ մարմին է, ում լիազորությունների շրջանակը սահմանված է երկրի սահմանադրությամբ և Հանրային պաշտպանի մասին օրենքով[46]:

Հանձնակատարին իրավունք ունի դիմելու յուրաքանչյուր ոք երեխաների իրավունքների խախտումների դեպքում կամ եթե առկա է այդպիսի խախտումների սպառնալիք: Երեխաները կարող են առանց կողմնակի անձի թույլտվության կամ օգնության դիմելու Հանձնակատարին, ինչպես նաև երեխան կարող է իր օրինական ներկայացուցչի միջոցով իր բողոքը ներկայացնել Հանձնակատարին[47]:

---

[42] http://deti.ochrance.cz/cim-se-zabyva/
[43] http://deti.ochrance.cz/krizova-centra-v-cr/
[44]https://eno.ombudsman.europa.eu/cms/home/news/archives-2016/maincontent/more-children-turn-to-czech-ombu.html
[45] Նույն տեղում
[46] http://www.vop.gov.sk/langEnglish
[47] http://www.komisarpredeti.sk/o-komisarovi/

Ինչպես Հունգարիայի, այնպես էլ Սլովակիայի դեպքում իրավունքների հանրային պաշտպանի էլեկտրոնային կայքի միջոցով անձիք հնարավորություն ունեն առցանց դիմում ներկայացնելու Պաշտպանին[48]: Դիմումի ձևը հատուկ հարմարեցված չէ երեխաների համար, սակայն, երեխաների որոշ տարիքային խմբերի համար այն, այնուամենայնիվ մատչելի է, քանի որ պահանջում է նշել անունը, ազգանունը, ում դեմ է բողոքը և ներկայացնել բողոքի կրճատ բովանդակությունը:

Միևնույն ժամանակ, Երեխաների իրավունքների հանձնակատարի էջում ներկայացված է դիմելու մի քանի տարբերակ: Երեխաները կամ անձիք, ովքեր ցանկանում են ահազանգել երեխաների իրավունքների խախտումների մասին, կարող են զանգահարել շուրջօրյա գործող հեռախոսահամարին[49]:

Հանձնակատարին կարող են դիել նաև առնանց: Մինչդեռ այս դեպքում անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային փոստ և նշել այն: Դիմումատուն պետք է նշի նաև իր անունը և ազգանունը և մուտքագրի կրճատ հաղորդագրությունը[50]:

Սլովակիայում ևս գործում է թեժ գիծ: Այս հեռախոսահամարով կարող են զանգահարել երեխաները, ովքեր օգնության կարիք ունեն կամ պարզապես ցանկանում են ինչ-որ մեկի հետ զրուցել: Այս մեխանիզմը օգնում է երեխաներին, ովքեր հայտնվել են դժվարին իրավիճակում և օգնության կարիք ունեն, ուղղորդում է նրանց իրենց իրավունքների պաշտպանության հարցում և հնարավորություն է տալիս բարձրաձայնելու իրենց խնդիրների և իրենց հուզող հարցերի մասին[51]:

Հետաքրքիր է Սլովակիայի Իրավունքների հանրային պաշտպանի գրասենյակի փորձը՝ կազմակերպելու երեխաների մասնակցությամբ և իրենց իրավունքների բարձրաձայնմանը նվիրված գիտաժողով՝ «Երեխայի իրավունքները երեխաների աչքերով» (2009թ.) խորագրով:

Լիտվա

Հաշվի առնելով, որ Երեխաների օմբուդսմանի մասին Լիտվայի օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երեխաների օմբուդմենին բողոք կարող

---

[48] http://www.vop.gov.sk/would-you-like-to-file-a-complaint
[49] http://www.komisarpredeti.sk/kontakt/
[50] Նույն տեղում
[51] http://www.vop.gov.sk/emergency-contacts

է ներկայացվել նաև երեխայի կողմից»՝ Լիտվայի փորձը նույնպես կարելի է դասել երեխայի՝ լսված լինելու իրավունքի իրացման ուղղակի մոդելների շարքին:

Լիտվայի՝ Երեխաների օմբուդսմանին դիմումը որպես կանոն պետք է ներկայացվի գրավոր եղանակով՝ փոստով, ֆաքսով, կամ էլեկտրոնային հասցեով ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով: Գրավոր բողոքը պետք է ներկայացվի Երեխաների օմբուդսմանի մասին Լիտվիայի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ: Դիմումը կարող է ներկայացվել նաև բանավոր եղանակով՝ թեժ գծին զանգահարելու միջոցով, որի դեպքում օմբուդսմանը կարող է հարցը քննարկել սեփական նախաձեռնությամբ[52]:

Երեխաների օմբուդսմանի կայքէջը մատչելի է մայրենի, ինչպես նաև անգլերեն և ռուսերեն լեզուներով՝ հաշվի առնելով Լիտվայում ապրող փոքրամասնությունների լեզուները: Միևնույն ժամանակ, կարելի է նկատել, որ տեղեկատվությունն առկա է և թարմացնում է հիմնականում պետական և անգլերեն լեզուների տարբերակներում, մինչդեռ ռուսերեն լեզմով կայքի էջերը կա'մ դատարկ են, կա'մ էլ չեն թարմացվել[53], ինչը, հավանաբար, արտացոլում է պետության հակառուսական քաղաքական մոտեցումը, սակայն, ցավոք, անդրադառնում է նաև երենախերի պաշտպանության ոլորտում անհավասար հնարավորությունների ստեղծման վրա: Բացի այդ, կայքէջը չունի երեխաների հոգեբանությանը հարմարեցված բնույթ, չի ապահովում պատկերավոր-խաղային մոտեցումներ երեխաների հետ հաղորդակցվելու հարմարավետության ապահովման տեսանկյունից:

[52] http://www3.lrs.lt/pls/inter/vaikai?sakId=7878&dokId=110710&kalbId=2
[53] http://www3.lrs.lt/pls/inter/vaikai?sakId=7866&kalbId=5

Էստոնիա

Ինչպես Լիտվայում, այնպես էլ Էստոնիայում երեխաների իրավունքների վերաբերյալ դիմումը Էստոնիայի Արդարադատության կանցլերին կարող է ներկայացվել վարչական մարմնի գործողության կամ անգործության դեմ, ցանկացած անձի՝ այդ թվում երեխայի կողմից[54]:

Դիմումը կարող է ներկայացվել գրավոր եղանակով՝

- օմբուդսմանի պաշտոնական կայքի միջոցով,
- էլեկտրոնային հասցեին նամակ ուղարկելու միջոցով,
- առձեռն, փոստով կամ ֆաքսի միջոցով:

Դիմումը կարող է ներկայացվել նաև բանավոր եղանակով՝ զանգահարելով Արդարադաության կանցլերի գրասենյակ զանգահարելու միջոցով:

Նախատեսված է նաև գրասենյակի մասնագետներին հանդիպելու հնարավություն: Հանդիպումը պետք է նախապես համաձայնացնել պաշտոնական կայքում նշված հեռախոսահամարին զանգահարելու միջոցով:

Գրասենյակը պատրաստել և տարածում է տեղեկատվական բուկլետներ, որտեղ մանրամասն և երեխայի համար մատչելի լեզվով ներկայացված են Օմբուդսմանի գործառույթները, ով և ինչպես կարող է դիմում ներկայացնել, և որ իրավունքների խախտման դեպքերում[55]:

Պետք է նշել, որ Էստոնիայի՝ Արդարադատության կանցլերի ինստիտուտն իրականացնում է նաև խախաձեռնություններ, որոնց օգնությամբ խթանում է տարբեր կազմակերպությունների ներգրավումն երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված իր գործունեության մեջ: Մասնավորապես, Օմբուդսմանի կողմից սահմանված է տարեկան մրցանակ՝ «Երեխաների հետ և երեխաների համար», որով յուրաքանչյուր տարի խրախուսվում են երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված անհատների և կազմակերպությունների ջանքերը: Նախապես հայտարարված մրցույթին հավաքագրվում են մասնակիցների անուններն ու իրենց գործունեության մասին կարծիքներ, իսկ հունիսի 1-ին՝ Երեխաների

[54] http://www.oiguskantsler.ee

[55] http://www.oiguskantsler.ee/sites/default/files/Ombudsman%20for%20Children%20-%20informative%20booklet%202015.pdf

պաշտպանության օրը հրապարակային միջոցառման ընթացքում հայտարարվում և պարգևատրվում են մրցույթի հաղթողները[56]:

Հատուկ ուշադրության են արժանի Էստոնիայի՝ երեխաների իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող ծրագրերը, որոնք ուղղված են դպրոցներում երեխաների կողմից միմյանց հանդեպ հետապնդումների, երեխաների հալածանքի (bullying) դեմ[57]: Երեխաների խմբում որևէ անդամին հալածելու երևույթը, առկա լինելով ամբողջ աշխարհում և հատկապես հատուկ լինելով դպրոցներում և ուսանողական խմբերում, կոնֆլիկտային վարքի դրսևորում է և ոչ միայն խախտում է երեխայի իրավունքներն այլ երեխաների կողմից, այլև կարող է բերել հալածվող երեխայի մոտ հոգեբանական խնդիրների առաջացմանն ու սրմանը՝ ընդհում ինքնասպանությունը: բացի այդ, երեխաների կողմից իրենց հասակակցին հալածելը կարող է նաև ֆիզիկական բնույթ ստանալ: Այս իմաստով Էստոնիայի օմբուդսմանի՝ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնությունները կարող են օգտակար և արդյունավետ լինել նաև հայաստանյան պայմաններում կիրառվելու առումով:

Այսպես, Էստոնիայի օմբուդսմանի հատուկ կայքէջում ներկայացվում է երեխաների հալածանքի դեմ պայքարի արդյունավետ միջազգային փորձը, այդ ոլորտում իրականացվող ծրագրերը, խորհուրդներ են տրվում ուսումնական հաստատությունների անձնակազմին՝ իրենց պատասխանատվության տակ գտնվող երեխաների շարքում հալածանքների կանխարգելման ուղղությամբ: Բացի այդ, խորհուրդներ են տրվում, թե ինչպես ապահովել առողջ դպրոցական միջավայր[58]:

---

[56] Տե՛ս, օրինակ՝ http://www.oiguskantsler.ee/ru/%D0%BD%D0%B0%D0%B3%D1%80%D0%B0%D0%B4%D0%B0-%C2%AB%D1%81-%D0%B4%D0%B5%D1%82%D1%8C%D0%BC%D0%B8-%D0%B8-%D0%B4%D0%B5%D1%82%D1%8F%D0%BC%C2%BB-%D0%B6%D0%B4%D1%91%D1%82-%D0%BD%D0%BE%D0%BC%D0%B8%D0%BD%D0%B0%D0%BD%D1%82%D0%BE%D0%B2

[57] http://www.oiguskantsler.ee/koolikiusamine/ru/index.html

[58] http://www.oiguskantsler.ee/koolikiusamine/ru/kiusamine.html

Իռլանդիա

Իռլանդիայում երեխաների՝ լսվելու (բողոք ներկայացնելու) իրավունքն իրականացված է մշտական հիմունքներով գործող՝ Երիտասարդական Խորհրդատվական Հանձնաժողովի (Youth Advisory Panel -YAP)[59] միջոցով: Հանձնաժողովի կարգախոսն է՝ «Մենք արտահայտում ենք ամբողջ Իռլանդիայի երիտասարդների հայացքներն ու ձայնը»:

Հանձնաժողովը՝ երեխաների 10 հոգանոց խումբն (16 – 21 տարեկան) ընդգրկված է երեխաների օմբուդսմանի ընտրության գործընթացում, ինչը ներառում է աշխատանքի նկարագրության կազմումը, աշխատանքի հայտարարության ձևակերպումը, և թեկնածուների հետ աշխատանքի ընդունման հարցազրույցի վարումը:

Երիտասարդական Խորհրդատվական առաջին Հանձնաժողովն ընդգրկված է եղել նաև օմբուդսմանի գրասենյակի ավագ թիմի հավաքագրման գործում, ինչին նախորդել են թրեյնինգներ և աշխատանքի նկարագրության ստեղծման օգնություն, թեկնածուի հարցազրույցի հարցերի կամզում և աշխատանքային հարցազրույցի վարման և աշխատանքի ընդունման հանձնաժողովներում մեծահասակների հետ հավասարության սկզբունքով անդամություն: Նշված հանձնաժողովները, սովորաբար, անկախ գործող մարմիններ են՝ կազմված Երիտասարդական Խորհրդատվական հանձնաժողովի և աշխատակզմի երկուական անդամներից:

Երիտասարդական Խորհրդատվական հանձնաժողովի գործառույթները հիմնականում հանգում են հետևյալներին՝

1. Տրամադրել խորհրդատվություն օմբուդսմանի գրասենյակին երեխաների և երիտասարդների հետ շփումների հարցում:
2. Տեղեկացնել օմբուդսմանի գրասենյակին երեխաների և երիտասարդների համար ծագած խնդիրների մասին:
3. Օժանդակել նախագծելու, պլանավորելու և ներդնելու օմբուդսմանի գրասենյակի և «Երեխաների իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման կառուցակարգեր:

[59] https://www.plan.ie/stories/yap/

4. Մասնակցել ՋԼՄ-ների կողմից երեխաների իրավունքների բարձրաձայնմանն ու հիմնախնդիրների քննարկմանը:
5. Ներկայացնել Օմբուդսմանի գրասենյակը երեխաների համար նախատեսված

միջոցառումներում և խրախուսել երեխաների և երիտասարդների մասնակցությունը նշված միջոցառումներին:

6. Մասնակցել տվյալ հիմնախնդրին նվիրված գիտաժողովներին և մասնագիտական ու հանրային քննարկումներին:

Հատկանշական է Հանձնաժողովի կողմից կանանց (աղջիկների) իրավունքների հատուկ ընդգծումն ու հնչեցումը՝ «Որովհետև աղջիկ եմ» թեմատիկ գործունեության և տեղեկատվական աշխատանքի միջոցով: Մասնավորապես, Հանձնաժողովի կայքում կարելի է տեսնել «100 միլիոն պատճառ՝ գործելու աղջիկների օգտին», «Ընդդեմ անչափահաս աղջիկներին բռնի ամուսնացնելուն», «Ինչու հենց աղջիկների իրավունքներ», և այլ ենթաթեմաներով վիճակագրական տվյալներ, ծրագրեր, կանանց և աղջիկների իրավունքների պաշտպանությանն ուղղված նախաձեռնություններ[60]:

Իռլանդիայի՝ Երիտասարդական Խորհրդատվական հանձնաժողովի ստեղծման և գործունեության փորձը կարող է կիրառվել նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի և թիրախային խմբի միջև մշտական կապի ապահովման, երիտասարդների ներգրավմամբ բողոքարկման երեխայակենտրոն մեխանիզմի ստեղծման, աղջիկների իրավունքները հատուկ շեշտադրելու գործում:

Հաշվի առնելով, որ ուսումնասիրված մեկ այլ պետությունում՝ **Լատվիայում** երեխաների իրավունքների հարցերով առանձին պաշտպան չկա, և երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվում է երկրի օմբուդսմանը, Լատվիայի փորձը նույնպես կարելի է դասել երեխաների պաշտպանության միջնորդավորված մոդելների շարքին:

Լատվիայի օմբուդսմանին հնարավոր է դիմում ներկայացնել՝

1. էլեկտրոնային եղանակով՝ էլեկտրոնային ստորագրության միջոցով,

2. Հասարակ գրավոր ձևով՝ փոստով ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:

[60] https://www.plan.ie/biaag-page/100-million-girls/

Նախատեսված է նաև օմբուդսմանին կամ գրասենյակի մասնագետներին հանդիպելու հնարավություն: Հանդիպումը պետք է նախապես համաձայնացնել պաշտոնական կայքում նշված հեռախոսահամարին զանգահարելու միջոցով:

Առկա է նաև հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով խորհրդատվություն ստանալու հնարավորություն[61]:

Օմբուդսմանի գրասենյակի կողմից դիմումների գրանցման և դրանց քննարկման ընթացակարգերը կարգավորվում են օմբուդսմանի մասին օրենքով, ինչպես նաև ներքին ընթացակարգային կանոնակարգերով:

Միևնույն ժամանակ, կարելի է խոսել Լատվիայի օմբուդսմանի կողմից երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում բացթողումների և թերությունների արձանագրման մասին, որոնք կարող են հիշեցնել նաև ՀՀ-ում այդ ոլորտում առկա կամ հնարավոր հիմնահարցերը: Այսպես, Լատվիայում երեխաների խնամքով և ուսմամբ զբաղվող հաստատություններ իրականցված այցերի և հետազոտությունների արդյունքում Օմուդսմենի կողմից վեր են հանվել մի շարք խնդիրներ, որոնք մանրամասն շարադրվել են Լատվիայի Օմբուդսմանի 2015 թվականի տարեկան հաշվետվությունում[62]:

Մասնավորապես, հաշվետվոթյամբ արձանագրվել է, որ երեխաները տեղեկացված չեն բողոք ներկայացնելու իրենց իրավունքի մասին, բացի այդ, բազմաթիվ են փակ հաստատություններում այդ բողոքների չհաշվառման և դրանց ընթացք չտալու դեպքերը: Պրակտիկան ցույց է տվել, որ բանավոր ներկայացված բողոքները առավելապես չեն արձանագրվում, ինչպես պահանջվում է Վառչական վարույթի մասին օրենքով: Բացի այդ, առկա է նաև մտահոգություն այն մասին, թե արդյոք ապահովվում է երեխաների՝ համապատասխան հաստատություններից դուրս (Օմբուդսմանի գրասենյակ, կամ երեխաների իրավունքների պաշտպանության պետական տեսչություն) իրենց բողոքները ներկայացնելու իրավունքի իրացումը: Արդյոք նրանց տրամադրվում է այդ մարմինների հասցեները և հեռախոսահամարները, ապահովվում է նրանց հետ կապ հաստատելու հնարավությունը, արդյոք առկա

[61] http://www.tiesibsargs.lv/en/pages/add-application

[62] http://www.eoi.at/d/EOI%20-%20Jahresberichte/Lettland/Annual%20Report%202015_Ombudsman's%20Office%20of%20the%20Republic%20of%20Latvia.pdf

է վերջիններից նամակ ուղարկելու հնարավորություն (արդյոք տրամադրվում է գրիչ, թուղթ, ծրար, փոտային նամականիշ): Երեխաների հետ ունեցած առանձնազրույցների արդյունքում արձանագրվեց, որ համապատասխան հաստատություններում նրանք չունեն օմուդսմենին բողոք ներկայացնելու հնարավորություն: Դրա հիմնական պատճառներն են՝ բողոք ներկայացնելու իրավունքի վերաբերյալ երեխաների տեղեկացվածության ցածր մակարդակը, ինչպես նաև համապատասխան հաստատության անհրաժեշտ հագեցվածության բացակայությունը (հեռախոս, փոստային նամականիշ, ծրար, թուղթ, գաղտնի փոստարկղ և այլն): Բացի այդ, համապատասպան հաստատություններում բողոք ներկայացնելը դիտվում է որպես բացասական երևույթ, և վերջիններս շահագրգռված չեն երեխաներին բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ տեղեկատվություն տրմադրելու հարցում:

Արդյունքում Օմբուդսմանի կողմից ներկայացվել է առաջարկություն հետևյալ ուղղություններով.

1. Վարչական վարույթի մասին օրենքին համապատասխան գրանցել բանավոր բողոքները

2. անհրաժեշտ միջոցեր ձեռնարկել համապատասխան հաստատությունից դուրս բողոքներ ներկայացնելու իրավունքի իրացման ուղղությամբ, այդ թվում գաղտնի բողոք ներկայացնելու հնարավորության ընձեռում

3. բողոքարկման ընթացակարգերի վերաբերյալ երեխաներին մատչելի եղանակով տեղեկատվության տրամադրում.

Միաժամանակ, բողոքների ներկայացման ընթացակարգերի կատարելագործման նպատակով, առաջարկվել է բարեփոխել նաև իրավական դաշտը: Մասնավորապես, պետական մարմիններին և մարդու իրավունքների պաշտպանին բողոք ներկայացնելու վերաբերյալ կարգավորումները նախատեսված են «Երեխաների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասով, որի համաձայն՝ Երեխան կամ ցանկացած այլ անձ իրավասու է դիմել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում գործող իրավասու մարմիններին, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, եթե երեխայի ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչներ, կամ երեխայի խնամքով կամ ուսմամբ

զբաղվող մարմինը խախտում է երեխայի իրավունքները: Նախատեսված կարգավորումը ամբողջական չէ, քանի որ այն նախատեսում է բողոք ներկայացնելու երեխայի իրավունքը միայն այն դեպքերի համար, երբ վերջինիս իրավունքները խախտվում են երեխայի ծնողների, այլ օրինական ներկայացուցիչների, կամ երեխայի խնամքով կամ ուսմամբ զբաղվող մարմնի աշխատակիցների կողմից: Մինչդեռ, անհրաժեշտ է նման հնարավորություն նախատեսել երեխաների իրավունքների խախտման ցանկացած դեպքում: Բացի այդ, առաջարկվել է օրենքով համապատասխան հաստատությունների համար նախատեսել պարտավորություն՝ ընդունելու երեխաների կողմից բողոքների ներկայացման և դրանց քննարկման ընթացակարգային կարգավորումներ, ինչպես նաև դրանք հասանելի դարձնել երեխաների համար:

Սերբիա

Սերբիայի Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, ով Սերբիայի Հանրապետության Սահմանադրությամբ լիազորված է խթանելու անձանց հիմնարար իրավունքների պաշտպանությունը[63]: Պաշտպանի առանձնահատուկ ուշադրությանն են արժանի գործունեության հետևյալ ուղղությունները..

- ✓ ազգային փոքրամասնությունների իրավունքներ,
- ✓ երեխաների իրավունքներ,
- ✓ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ,
- ✓ ազատությունից զրկված անձանց իրավունքներ,
- ✓ գենդերային իրավունքներ[64]:

Երեխաների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության համար, Պաշտպանի աշխատակազմի Երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի համախմբմամբ և Սերբիայում ԵԱՀԿ առաքելության աջակցությամբ ստեղծված է Երիտասարդների խորհրդատվական խումբը[65], որը բաղկացած է 13-17 տարեկան 30 երեխայից: Խմբում ընդգրկվելու համար

[63] http://www.ombudsman.org.rs/index.php?option=com_content&view=article&id=3&Itemid=24
[64] Նույն տեղում
[65] http://www.osce.org/serbia/76563

երեխան պետք է մասնակցի մրցույթում, որը կազմակերպվում է Պաշտպանի կողմից: Մրցույթի մասին հայտարարությունը փակցվում է դպրոցներում, ինչպես նաև վերջինիս մասին հայտարարվում է հեռուստատեսությամբ: Հայտարարության մեջ նշվում է, որ կարող են դիմել բոլոր երեխաները, ովքեր հետաքրքրված են իրավունքների պաշտպանությամբ:

Խմբում ընդգրկված երեխաների մասնկացությամբ կազմակերպվում են սեմինարներ, որոնց ընթացքում նրանք տեղեկանում են, թե ով է Պաշտպանը, որոնք են հիմնարար և երեխաների իրավունքները: Խմբի երեխաները Պաշտպանի աշխատակիցների հետ այցելում են դպրոցներ և զրուցում երեխաների հետ իրենց խնդիրների և իրավունքների մասին: Երեխաներն իրենց հասակակիցների հանդեպ ավելի շատ վստահություն ունեն, և արդյունքում այդպիսի զրույցների շնորհիվ բացահայտվում են երեխաների իրավունքների խախտումներ, որոնց մասին երեխաները չեն ցանկանում պատմել չափահաս անձանց:

Հետագայում, Խմբի երեխաները, պատմելով ձեռքբերված փորձի մասին իրենց համայնքներում, խթանում են այլ երեխաների մասնակցությունը Խմբում, ինչպես նաև բարձրացնում են երեխաների իրավունքների և դրանց պաշտպանության միջոցների մասին իրազեկվածությունը[66]:

Խախտված իրավունքների համար Սերբիայի Պաշտպանին կարող են դիմել՝ զանգահարելով, փոստի միջոցով դիմում ուղարկելով և Պաշտպանի գրասենյակում բողոք ներկայացնելով: Դիմումի ձևը հնարավոր է ներբեռնել Պաշտպանի էլեկտրոնային էջից: Այն կազմված է երեխաների համար մատչելի ձևով և պահանջում է լրացնել դիմողի անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը և բողոքի բովանդակությունը, որը կարող է շարադրվել կրճատ[67]: Դիմումում պահանջվում է նաև նշել դիմումատուի սեռը, ինչը դիմումների վերլուծության ժամանակ թույլ է տալիս հասկանալու, թե երեխաների իրավունքների խախտման որ դեպքերն են պայմանավորված սեռով:

---

[66] Երիտասարդների խորհրդատվական խմբի գործունեության առանձնահատկությունները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյանի աշխատակազմի ներկայացուցիչներին ներկայացրել են Սերբիայի մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները ուսուցողական այցի ընթացքում, http://pashtpan.am/media/study-visit-serbia.html

[67] http://www.ombudsman.org.rs/attachments/051_complaint_template.pdf

Ռուսաստանի Դաշնություն

ՌԴ նախագահին կից՝ Երեխաների իրավունքների հարցերով հանձնակատարի ինստիտուտի մոդելը, մի կողմից, ենթադրում է երեխաների իրավունքների խախտումների վերաբերյալ հանձնակատարին ուղիղ բեղոքելու մեխանիզմ: Սակայն մյուս կողմից այն ավելի շուտ պետք է դասել անուղղակի մեխանիզմներին, քանի որ հանձնակատարի կողմից բողոքելու ստեղծված պայմաններ ավելի շատ ենթադրում եմ երեխաների փոխարեն այլոց կողմից բողոքների ներկայացում, ինչը, մասնավորապես, պայմանավորված է Հանձնակատարի կայքէջում տեղադրված դիմում-բողոքի կառուցվածքով: Այսպես, դիմում-բողոքի ձևի կետերից են «Քաղաքացիությունը», «Սոցիալական կարգավիճակը», որոնց դիմող երեխան կարող է տարբեր պատճառներով ունակ չլինել պատասխանելու:

Բացի այդ, «Սոցիալական կարգավիճակ» տողի լրացման համար պետք է ընտրել առաջարկվող տարբերակներից մեկը, որոնցից միայն երկուսն են քիչ թե շատ համապատասխանում դիմող երեխաներին, այն է՝ “Սովորող” և “Այլ” տարբերակները: Փաստորեն, կայքում ՌԴ Երեխաների իրավունքների պաշտպանի հետ հաղորդակցման առաջարկվող ձևը նախատեսված է մեծահասակների համար[68]:

Պատահական չէ, որ 2015թ. բողոքների ամփոփման այդյունքում դուրս են բերվել բողոքողների առնչությունները երեխաների իրավունքներին, և վիճակագրությունից երևում է, որ ընդհանուր բողոքողների թվի 52.03%-ը ծնողներն են, 12.06%-ը՝ բարեկամներ, 10.29%-ը՝ այլ քաղաքացիներ, և միայն 0.92%-ը՝ որբացած երեխաներ և 0.90%-ը՝ անչափահասներ[69]: Փաստորեն, ՌԴ Երեխաների իրավունքների պաշտպանի գործունեությունը կարելի է դասել միջնորդավորված մոդելների թվին, որտեղ միջնորդում են մեծահասակները: Այս մոդելի թերություններից մեկն այն է, որ եթե մեծահասակները, այդ թվում՝ ծնողներն ու հարազատներն են երեխաների իրավունքների խախտումների պատճառը, ապա բողոքելու նման պայմաններում երեխան հազիվ թե կարող է աջակցություն ակնկալել:

[68] http://deti.gov.ru/submit.php
[69] http://deti.gov.ru/content-wide.php?id=33

Միևնույն ժամանակ, ՌԴ փորձի դրական կողմերից է տարբեր մարզերում երեխաների իրավունքների մարզային պաշտպանների առկայությունը, որոնք ենթարկվում են ՌԴ նախագահին կից՝ Երեխաների իրավունքների հարցերով հանձնակատարին և ունեն գործունեության հարաբերական ինքնուրույնություն՝ ապահովելով տեղում հարցերի պարզաբանումն ու կարգավորումը: Հետաքրքիր է նկատել, որ մարզային պաշտպանին դիմում-բողոքի ներկայացումն ավելի հեշտ է, և դիմելու ձևն ավելի մատչելի է երեխաների համար՝ չնայած որ չունի երեխաների հետ երկխոսությունը սատարող խաղային-զվարճացնող բնույթ[70]: Բացի այդ, օգտակար կարող է լինել նաև մարզային պաշտպանների կայքէջերում մանկական հոգեբանի հետ հաղորդակցվելու, իրեն դիմելու հնարավորությունը[71]:

Վրաստան

Վրաստանում գործող երեխաների Օմբուդսմանի ինստիտուտը հիմնադրվել է 2000 թվականին: Օմբուդմենը ուսումնասիրում է ստացված դիմումները և տրամադրում է օգնություն, կատարում է ոլորտային հետազոտություններ և տրամադրում է խորհրդատվություն որոշում կայացնելու իրավասություն ունեցող մարմիններին, ինչպես նաև երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններին երեխաների իրավունքների խախտման առնչությամբ ստացված բողոքների քննության արդյունքում վեր հանված խնդիրներին լուծում տալու ուղղիների վերաբերյալ[72]:

Երեխաների Օմբուդսմանը ստանում է դիմումներ երեխաների ազգականներից, ծառայություններ մատուցողներից, իրավապահ մարմիններից և երեխաների իրավունքների պաշտպանությամբ մտագոված ցանկացած այլ անձանցից: Օմբուդսմանին կարելի է դիմել նաև առնցանց՝ լրացնելով պաշտոնական կայքէջում պահանջվող տեղեկատվությունը: Դիմումը կարող է վերաբերել ոչ միայն կոնկրետ երեխայի իրավունքների խախտմանը, այլ

[70] http://www.spbdeti.org/feedback
[71] Տե՛ս, օրինակ՝ http://www.spbdeti.org/psych
[72] https://oca.georgia.gov/

դիմողը կարող է նաև հայտնել մտահոգություններ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ[73]:

Արագ արձագանքում պահանջող հարցերի դեպքում պաշտոնական կայքեջում առկա է առանձին բաժին, որի միջոցով հնարավորություն է տրվում դիմելու Ընտանիքի և երեխաների հարցերով բաժին: Բաժնում գործում է 1-855-422-4453 թեժ գիծը: Դիմումը կարող է ներկայացվել նաև էլեկտրոնային փոստի միջոցով կամ ֆաքսով[74]: Կայքէջում տեղադրված է նաև դիմումի ձևանմուշը:

Այսպիսով, քննարկված եվրոպական երկրների ընտրությունը պայմանավորված է եղել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում առաջադեմ եվրոպական փորձի ուսումնասիրման արդյունքում դրական օրինակների դուրսբերման և վերլուծության հնարավորությամբ, ինչպես նաև առկա բացթողումների հաշվարկման կարևորությամբ՝ ազգային մեխանիզմների ձևակերպման ընթացքում: Ինչ վերաբերում է նախկին ԽՍՀՄ որոշ երկրներին, ապա դրանց հարաբերականորեն նոր փորձը նույնպես կարող է ուսանելի լինել՝ հաշվի անելով մոտ անցյալում Հայաստանի և այդ երկրների նման վիճակն ու այսօր մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում նմանատիպ հիմնախնդիրների առկայությունը: Վերոնշյալ երկրների փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում մշակված տարաբնույթ ազգային մեխանիզմները, համեմատել ՀՀ-ում կիրառվող մոտեցումների հետ և նպաստել Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված մեխանիզմների արդիականացմանը:

[73] https://oca.georgia.gov/webform/request-oca-assistance-or-investigation
[74] https://oca.georgia.gov/child-abuse-and-neglect-reporting

Այսպես, երեխաների մշտական այցելությունների կազմակերպումն ու իրենց հետ երեխաներին հուզող հարցերի քննարկումը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում էապես կնպաստի երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտմանն ու մշտազննմանը, այդ հիմնախնդիրների համարժեք ձևակերպմանն ու լուծմանը: Բացի այդ, երեխաների հետ սոցիոլոգիական հարցումների իրականացումն ու իրենց կարիքների բացահայտումը կարող է մշտական բնույթ ստանալ և դառնալ կանխարգելման մեխանիզմի գործիքակազմի մասը:

Երեխաների համար մատչելի, ընկալելի և հետաքրքիր տեղեկատվությունը Պաշտպանի կայքէջում կարող է այն երեխաների համար հաճախակի այցելությունների պատճառ դառնալ, որի ընթացքում երեխաների հետ Պաշտպանի աշխատակազմի մասնագետների արդյունավետ շփումը կնպաստի երեխաների մոտ իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, երեխաներին հուզող հարցելի բացահայտմանը և քննարկմանը, մասնագիտական խորհրդատվության իրականացմանը և երեխաների իրավունքների խախտման ռիսկերի կանխարգելմանը:

Հայաստանում միջազգային փորձի տեղայնացման ընթացքում անհրաժեշտ է ուսումնասիրել հասարակության մեջ առկա կարծրատիպային մոտեցումներն ու ընկալումները մարդու իրավունքների, դրանց պաշտպանության համար ավանդաբար կիրառվող և իրավական մոտեցումների շրջանակներում ներկայացվող մեխանիզմների վերաբերյալ, դուրս բերել երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա հիմնախնդիրները: Անհրաժեշտ է պարզել երեխաների՝ իրենց իրավունքների մասին պատկերացումները, այդ պատկերացումների վրա մեծահասակների և սոցիալական միջավայրի ազդեցությունը, դուրս բերել վիճակագրական տվյալներ Հայաստանում երեխաների իրավունքների խախտումների վերաբերյալ: Այս համատեքստում հատկապես կարևորվում են փորձագիտական կարծիքն ու փորձագետների՝ երեխաների իրավունքների պաշտպանության գործունեության ընթացքում առկա փորձը: Տեղական և

միջազգային փորձի համադրումը թույլ կտա մշակել առաջարկություններ՝ Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված ջանքերի և դրանց նպաստող կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

5. ՀՀ-ՈՒՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փորձագիտական կարծիք

Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային արդյունավետ փորձի ուսումնասիրությունը թույլ է տալիս դուրս բերելու այլ պետություններում այդ ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված նվաճումներն ու բացթողումները, ինչպես նաև զարգացնել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունն ու, մասնավորապես, Հայաստանում երեխաների՝ իրավունքների լիարժեք պաշտպանության մեխանիզմները:

Հայաստանյան հասարակության առանձնահատկությունների պայմաններում երեխաների պաշտպանվածության հիմնահարցերի քննարկումները փորձագետների հետ[75] թույլ են տալիս անելու որոշակի եզրակացություններ՝ կապված երեխաների իրավունքների պաշտպանության տեսակետից խոցելի խմբերի և առկա հիմնախնդիրների հետ:

Ինչպես նշել են փորձագետները, Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանությունը առաջին հերթին իրականացվում է իրենց ծնողների կողմից, որոնք առաջնորդվում են հայկական ընտանիքի ավանդական արժեքներով: Միևնույն ժամանակ, փորձագետների կողմից իրականացվող գործունեության արդյունքները և իրենց մոտ առկա տվյալները վկայում են այն մասին, որ ծնողների կեսից ավելին երեխաների դաստիարակության ընթացքում կիրառում են ֆիզիկական բռնություն, և միևնույն ժամանակ գիտակցում են, որ դա դաստիարակության լավագույն միջոցը չէ:

«Մեր ծնողների 70%-ն այսօր դաստիարակության մեջ կիրառում է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն, իսկ 40%-ը ֆիզիկական բռնություն է կիրառում երեխաների նկատմամբ: Մինչդեռ նույն ծնողների 67%-ը գտնում է, որ երեխայի նկատմամբ բռնությունը՝ որպես դաստիարակության միջոց, արդյունավետ չէ:

[75] Ներկայացվող հիմնահարցերը քննարկվել են ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Vorld Vision, Կարմիր Խաչ, Կանանց ռեսուրսային կենտրոն կազմակերպությունների փորձագետների հետ:

Միևնույն ժամանակ, երեխային դաստիարակելու այլ միջոցներ այդ ծնողները չեն կիրառում: Այսինքն՝ եթե երեխան դասը չի անում, ապա ծնողը կարող է երեխայի վրա բղավել, ապտակել և այդ դեպքում «ամեն ինչ կընկնի իր տեղը»[76]:
Փորձագետ

Պետք է նշել, որ նման տվյալներ ստացվել են նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտային այլ հիմնախնդիրներով, մասնավորապես՝ կանանց իրավունքներով և ընտանեկան առողջության հիմնահարցերով զբաղվող այլ կազմակերպությունների կողմից: Այսպես, 2016թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ն «Բաց Հասարակության Հիմնադրամ-Հայաստան» գրասենյակի աջակցությամբ իրականացրել է հետազոտություն, որի նպատակն էր բացահայտել դեռահաս երեխաներ ունեցող ծնողների դիրքորոշումները ծնողավարության, դաստիարակության, երեխաների սեռական կրթության վերաբերյալ: Իրականացված հետազոտության արդյունքում պարզ է դարձել, որ ֆիզիկական բռնությունը՝ որպես դաստիարակության միջոց, հայկական ընտանիքներում առավել ընդգծված է մարզերում, մինչդեռ երևանաբնակների կարծիքով այն ընտանեկան դաստիարակության երկրորդական, ծայրահեղ միջոց է: Բացի այդ, երեխաների հանդեպ դաստիարակչական նպատակներով ընտանեկան բռնությունն ունի ընդգծված սեռային բնութագրիչներ. տղաներին պատժում են ավելի խիստ, քան աղջիկներին:

«Դեռահաս տղային ծեծի տեսքով ֆիզիկական բռնության ենթարկելը մարզային քաղաքների կանանց համար դիտարկվում է որպես նրանց դաստիարակության և հնազանդության ամենակարևոր նախապայման. «Տղան առանց ծեծ չի մեծանում, պիտի պարտադիր տղային ծեծես: Աղջկան, ասենք, նուրբ ձևով ես դաստիարակում»:
(կանանց ֆոկուս խումբ, ք. Սևան)»[77]

[76] Փորձագետի կողմից բերված հետազոտության արդյունքներից:
[77] ԾՆՈՂՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ. Հետազոտության արդյունքներ: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ, Ե., 2017թ.

Հետաքրքիր է նկատել, որ երեխաների իրավունքների խախտումները և, մասնավորապես, իրենց հանդեպ բռնությունը երեխաների և ծնողների մոտ համապատասխան իրավագիտակցության բացակայությամբ կարող է ընկալվել որպես նորմալ վերաբերմունք:

Մեր կողմից պարբերաբար իրականացվող ֆոկուս-խմբային քննարկումները երեխաների հետ վկայում են այն մասին, որ երեխաները հաճախ արդարացնում են իրենց կողմից իրականացվվող բռնությունը. «եթե ես, ասենք, ցածր գնահատական եմ ստացել դրպոցում, չեմ արել, ինչ ուզում են իմ ծնողները, ապա նորմալ է, եթե ծեծի ենթարկվեմ»: Փորձագետ

Կարևոր հիմնահարց է դպրոցներում երեխաների իրավունքների խախտումների պրակտիկան, որը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, այդ թվում՝

1. որոշ դաստիարակչական նկատառումներով,
2. ուսուցիչների մոտ դասավանդման և երեխաների հետ աշխատանքի անհրաժեշտ հմտությունների բացակայությամբ,
3. բռնություն կիրառող և երեխաների իրավունքները խախտող ուսուցիչների կողմից ցուցաբերվող ավանդական մոտեցումներով, ժամանակակից դպրոցի և արդիական մոտեցումների մասին գիտելիքների և այդ ուղղությամբ վերապատրաստվելու, արդիականացվելու ցանկության բացակայությամբ,
4. երեխաների և պատանեկության հոգեբանության մասին պատկերացումների բացակայությամբ,
5. անպատժելիությամբ:

Պետք է նշել նաև, որ **դպրոցներում հաճախ բացակայում են երեխաների միջև կոնֆլիկտների լուծման արդյունավետ մեխանիզմներ**, ինչպես նաև այդ ուղղությամբ տարվող ջանքեր: Որպես հետևանք՝ դպրոցը փաստորեն նպաստում է երեխաների կողմից միմյանց հանդեպ բռնության կիրառմանը, ինչը նույնպես կարելի է կրթական հաստատություններում երեխաների իրավունքների անուղղակի խախտում համարել:

«Աշխատում եմ սիրահայ փախստականների երեխաների հետ, որոնք սովորում են հայաստանյան դպրոցներում: Իհարկե, մանավանդ տղաների միջև դպրոցում մշտապես լինում են կոնֆլիկտներ, “ռազբորկաներ”, որոնք դպրոցների ղեկավարության կողմից ոչ թե լուծվում են, այլ պատժվում, վանվում դպրոցից դուրս: Համապատասխանաբար, դպրոցից դուրս այդ կոնֆլիկտները շարունակություն և ավելի սուր ընթացք են ստանում: Դրանից հետո, երբ նա գալիս է դպրոց, ապա իր դպրոցական միջավայրում հայտնվում է լրիվ այլ վիճակում, հաճախ աուտսայդերի դերում: Նա չգիտի, թե դպրոցում ում դիմի, ինչպես բողոքի, ով իրեն կօգնի: Եթե նա ունի ավագ եղբայր, ապա այդ ավագ եղբոր միջոցով կարող է փորձել կարգավորել հարցը, սակայն ավագ եղբայրները և քույրերը սովորում են ավելի բարձր դասարաններում, որտեղ իրենց միջև խնդիրներ կարող են ունենալ: Այդ դեպքում ի՞նչ անեն, ու՞մ դիմեն դպրոցում բռնության ենթարկվող երեխաները»:
Փորձագետ

Փորձագետների կողմից նշվել է նաև, որ երեխաների իրավունքների մասին խոսելիս չպետք է սահմանափակվել միայն, ասենք, կրթական հաստատություններում իրականացվող ֆիզիկական կամ հոգեբանական բռնության փաստերով: Փորձագետների պրակտիկ աշխատանքում առկա են նաև դեպքեր, երբ խախտվել է երեխաների ուսման իրավունքը, և երբ հաճախ հնարավոր չէր այն պաշտպանել:

«Որպես պրակտիկ սոցիալական աշխատող՝ խոսեմ միայն առանձին համայնքների մասին, որոնց հետ աշխատում եմ: Շատ լուրջ խնդիր կա մեր դպրոցներում և մանկապարտեզներում: Որևէ տնօրեն կարող է իր դպրոցից հանել երեխային՝ առանց կարիքների գնահատման, պարզաբանման, հիմնահարցի լուծման, քանի որ չի ուզում որ “իր” դպրոցում “այդպիսի” երեխա սովորի:

Փորձագետների հետ հիմնախնդրի քննարկման ընթացքում գրեթե բոլորի կողմից հնչել է այն հարցը, թե ինչ պետք է անել՝ երեխային իր իրավունքների խախտման մասին բողոք ստանալուց հետո: Փաստորեն, փորձագետներն արձանագրել են, որ ՀՀ-ում երեխաների իրավունքների

պաշտպանության մեխանիզմներն անհստակ են: Մասնավորապես, մասնագետների կողմից բերվել են իրենց փորձից բխող օրինակներ, երբ հարցն անգամ ոստիկանություն հասցնելուց հետո այն ընթացք չի ստացել:

Փորձագետներն արձանագրել են նաև, որ Հայաստանում **երեխաների իրավունքները պաշտպանող մասնագետները հաճախ իրենք պաշտպանված և լսված չեն:**

«Փորձը վկայում է այն մասին, որ մասնագիտության բերումով բացահայտելով երեխաների իրավունքի խախտում՝ չեմ կարողանում դիմել պետական մարմիններին, որովհետև իրենք չեն արձագանքելու ըստ կարիքի: Այսինքն, **ինքը երեխաների իրավունքները պաշտպանող մասնագետը պաշտպանված չէ. "Ո՞վ ես դու, ինչ-որ ՀԿ-ից եկել են որ ինձ ասես, թե ես դպրոցում ինչ անե՞մ"»:**
Փորձագետ

Համայնքների կողմից երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագետները հիմնականում աջակցություն չեն ստանում, ինչն իրենց գործունեությունը խոչընդոտող հիմնական գործոններից է: Ավելին, ինչպես նշել են փորձագետները, համայնքների կրթական հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը չի կարևորվում:

«Եթե կրթական հաստատության, օրինակ՝ դպրոցի տնօրենն ունի լուրջ կապեր համայնքի ղեկավարության հետ, ապա մասնագետի բոլոր ջանքերը՝ պաշտպանելու այդ դպրոցում երեխայի խախտված իրավունքները, ապարդյուն են: Ավելին՝ դրա հետևանքով ես կարող եմ անգամ լսել սպառնալիքներ, կորցնել աշխատանքս ու անձնական բացասական հետևանքներ ունենալ»:
Փորձագետ

Փորձագետներն անդրադարձան նաև Խնամակալության և հոգաբարձության պետական մարմինների գործունեությանը: Նշվեց, որ այդ մարմինների գործունեությունը հաճախ հասցեական և մասնագիտական չէ, և եթե, օրինակ, ծնողը բողոքում է դպրոցում իր երեխայի իրավունքների

խախտման վերաբերյալ, ապա համոզված չէ, որ իր բողոքը տեղ կհասնի և համապատասխան մասնագիտական լուծում կստանա:

«Խնամակալության և հոգաբարձության պետական մարմինների աշխատակիցները, հաճախ, իրենք են կողմնակից բռնության: Իրենց աշխատանքի ընդունելիս սովորաբար չի քննարկվում իրենց կոմպետենտության հարցը: Ուստի ու՞մ բողոքես. նրանց, ով ի՞նք է բռնության կողմնակիցը: Քաղծառայողների համար նախատեսված ինչ-որ քննություն են հանձնում, ստանում են բազում լիազորություններ և երեխայի ճակատագրի հետ կապված որոշումներ են ընդունում»:
Փորձագետ

Խոսելով երեխաների՝ բողոքելու համար մատչելի հնարավորությունների մասին՝փորձագետներն առանձնացրեցին հեռախոսազանգի և համացանցի միջոցող հաղորդագրությունների ուղարկման մեթոդները: Ցավոք, ըստ փորձագետների, երեխաներից շատերը կա'մ չգիտեն նման հնարավորությունների մասին, կա'մ էլ իրավագիտակցության ցածր մակարդակի պատճառով այդ մեթոդներին չեն դիմի: Միևնույն ժամանակ, փորձագետներից ոմանք նշեցին, որ շատ երեխաներ՝ հատկապես փակ տիպի հաստատություններում, օբյեկտիվորեն զրկված են համացանցից ազատ օգտվելու հնարավորությունից, մինչդեռ հենց այնտեղ հաճախ խախտվում են իրենց իրավունքները:

«Իհարկե, շատ լավ կլիներ, եթե երեխաները կարողանային ուղարկել իրենց հարցերն ու բողոքները համապատասխան կայքէջում տեղադրված պատուհանի միջոցով: Սակայն շատ երեխաներ, մասնավորապես՝ մարզերում, ինչպես նաև հաստատություններում (մանկատուն, գիշերօթիկ դպրոց) չունեն հնարավորություն օգտագործելու համացանցը: Իսկ հենց առավել խոցելիներն ունեն կարիք՝ բողոքելու և լսված լինելու: Այդ պատճառով անհրաժեշտ է նաև Թեժ գիծը[78]»:
Փորձագետ

[78] Թեժ գծի մասին երեխաների տեղեկացման անհրաժեշտության և երեխաների կողմից այդ միջոցին դիմելու հնարավորությունները քննարկվել են նաև երեխաների հետ, որի արդյունքները կբերվեն ստորև:

Երեխաների հանդեպ բռնության համատեքստում մասնագետներն անդրադարձան նաև Հայաստանում մեծ ծավալների հասած և երեխաների կողմից միմյանց հանդեպ հետապնդումների, հալածանքի, ահաբեկման /bullying/[79] երևույթին: Այս դեպքում, ըստ մասնագետների, Հայաստանում հատուկենտ դեպքերում է համարժեք աշխատանք տարվում: Մասնավորապես՝ առանձին դպրոցներում երեխաների իրավունքների ոլորտում մասնագիտացած հասարակական կազմակերպությունների, ծնողական կոմիտեների և խնամակալության և հոգաբարձության պետական մարմինների աշխատակիցների կողմից ստեղծվում են համատեղ հանձնաժողովներ, որոնց մասին տեղեկացվում են երեխաներն ու ծնողները, որոնք կարող են նման դեպքերում բողոքել այդ հանձնաժողովներին: Միևնույն ժամանակ, նման փորձերը հեռու են հարցի արմատական լուծումից:

Մարդու իրավունքների պաշտպանին հասարակական կազմակերպությունների և երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մասնագետների հնարավոր միջնորդության հարցին փորձագետները պատասխանել են. «իսկ ի՞նչ կարող է ստեղծված պայմաններում անել Մարդու իրավունքների պաշտպանը»:

Նշվել է, որ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից երեխաների իրավունքների խախտումներին միջամտությունը պետք է լինի հստակ և որոշիչ, հակառակ դեպքում իրավիճակը չի փոխվելու:

«Ցանկալի կլիներ, որ, մասնավորապես, բաց և փակ տիպի կրթական հաստատություններում հստակորեն ընկալվեր այն, որ երեխաների այս կամ այն իրավունքի խախտման դեպքում Մարդու իրավունքների պաշտպանը խախտողների հանդեպ հստակորեն կիրառելու է կոնկրետ մեխանիզմներ: Այս դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի գործառույթներն իրոք հասցեական և կանխարգելիչ կլիներին»: Փորձագետ

Մի կողմից, փորձագետների կարծիքով, Մարդու իրավունքների

[79] https://hy.wikipedia.org/wiki/%D4%B2%D5%B8%D6%82%D5%AC%D5%AB%D5%AB%D5%B6%D5%A3

պաշտպանի գործառույթները պետք է արդյունավետորեն իրականացվեն քաղաքացի-պետական մարմին հարաբերությունների միջնորդության ապահովման և պետական մարմնի կողմից քաղաքացու խախտված իրավունքի վերականգնման գործընթացում լրացուցիչ գործոնի դերի ստանձնմամբ:

«Ինձ թվում է, որ Մարդու իրավունքների պաշտպանի առաքելությունն է՝ միջնորդելու խախտված իրավունքներով քաղաքացու և այդ իրավունքների վերականգնման համար պատասխանատու պետական մարմինների միջև: Եվ եթե պետական մարմին իր պարտականությունները չի կատարում, ապա Մարդու իրավունքների պաշտպանը պետք է ասի՝ պարտավոր ես կատարել: Միևնույն ժամանակ, Մարդու իրավունքների պաշտպանը պետք է աշխատանք տանի քաղաքացիների հետ՝ բարձրացնելու իրենց իրազեկվածությունն ու իրավագիտակցությունը, խնդրին տալու հասարակական հնչեղություն»:
Փորձագետ

Մյուս կողմից, առկա իրավիճակում, երբ պետական մարմինները հասարակության մեջ ցածր հեղինակություն են վայելում, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրենց դիտարկումը որպես քաղաքացիների իրավունքների պաշտպանության հիմնական սուբյեկտի, կարող է ոչ այդքան արդյունավետ լինել:

«Փաստորեն, եթե երեխայի իրավունքները խախտվել են դպրոցում, մանկատանը, ընտանիքում, փողոցում, և պետական լիազոր մարմինը այդ հարցը պատշաճ կերպով չի լուծել, ապա ինչ իմաստ ունի դարձյալ դիմելու իրեն՝ արդեն Մարդու իրավունքների պաշտպանի միջնորդությամբ: Ցանկալի կլիներ, եթե Մարդու իրավունքների պաշտպանն ունենար իրավունք՝ սեփական միջոցներով հասնելու հարցի լուծմանն ու երեխաների իրավունքների պաշտպանությանը՝ առանց պետական մարմիններին երկրորդ կամ երրորդ անգամ դիմելու»:
Փորձագետ

Այսպիսով, փորձագետների կարծիքով՝ երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետությունը ենթադրում է ոչ միայն բողոք կամ

դիմում ներկայացնելու նոր տեխնիկական հնարավորությունների ներդրում, այլև բարեփոխումներ՝ Մարդու իրավունքների պաշտպանի լիազորությունների գործադրման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է երեխաների սոցիալականացման հետ առնչվող ինստիտուտների պայմաններում երեխաների իրավուքների խախտումների դեպքում Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ուղղակի միջամտության մեխանիզմների զարգացում, ինչպես նաև պետական լիազոր մարմինների վրա Մարդու իրավունքների պաշտպանի ուղղակի ներազդման մեխանիզմների ձևավորում, որոնք մասին նաև տեղեկացված կլինեն ինչպես երեխաները, այնպես էլ իրենց իրավունքների պաշտպանության համար պատասխանատուները:

Երեխաների իրավունքների պաշտպանությունը երեխաների աչքերով

Մարդու իրավունքների պաշտպանի՝ երեխաների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործառույթները, առկա և հնարավոր մեխանիզմները քննարկվել են նաև տարբեր դպրոցներից ընտրված շուրջ 40 երեխայի հետ, որոնք ակտիվորեն մասնակցում են երեխաներին հուզող հիմնախնդիրների քննարկումներին, երեխաների իրավունքներին ուղղված նախաձեռնություններին և իրենց սոցիալական խմբում հանդիսանում են կարծիքի առաջնորդներ: Դպրոցականների մի մասն ընդգրկված է World Vision Armenia-ի կողմից նախաձեռնված խմբակներում[80], մյուսները մասնակցել են ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կողմից կազմակերպվող քննարկումներին:

Քննարկումների ժամանակ պարզ դարձավ, որ երեխաների հիմնական խնդիրները և դժվարություններն առաջանում են ոչ թե տանը, այլ դպրոցում, և դպրոցում երեխաներին պատճառած դժվարությունների, իրենց իրավունքների խախտումների դեպքում հիմնականում միջամտում է երեխայի մայրը, որը գալիս է դպրոց և փորձում խնդիրը հարթել: Սա հիմնականում վերաբերում է այն խնդիրներին, որոնք երեխաներն ունենում են ուսուցիչների հետ: Ինչ վերաբերում է հասարակիցների հետ առկա կոնֆլիկտներին, ապա հարցվածների մեծ մասը նախընտրում է այդ մասին տանը չպատմել և հարցերը կարգավորել կա՛մ տվյալ

[80] http://www.wvi.org/armenia/youth-empowerment

հասարակցի հետ, կա՛մ էլ՝ դիմելով ավագ բարեկամներին և ընկերներին:

Մարդու իրավունքների պաշտպանին բողոքելու տեխնիկական հնարավորությունների մասին քննարկումը հանգեցրեց նրան, որ երեխաները կնախընտրեին նման աջակցությունը, եթե այն լինի հասցեական և մասնագիտական: Վստահության տեսանկյունից իրենց համար ի սկզբանե ավելի վստահելի են հարազատները, և Մարդու իրավունքների պաշտպանի կամ այլ հաստատության մասնագետներն իրենց հաղորդակցական և տեխնիկական հնարավորություններով պետք է համալիր մոտեցում ցուցաբերեն, որպեսզի երեխաները սկսեն դիմել այդ հաստատության աջակցությանը:

«Ինչու՞ պետք է անծանոթ մարդկանց ինչ-որ բան ասենք, եթե կարող ենք մայրիկին ասել»:
Դպրոցական, Ի.ս.

Միևնույն ժամանակ, երեխաների հետ քննարկման ընթացքում պարզ դարձավ, որ իրենք ունենում են մի շարք հարցեր, որոնց շուրջ կնախընտրեին չկիսվել ծնողների և առավելևս տատիկ-պապիկների հետ: Նման դեպքերում իրենց անհրաժեշտ է ոչ այնքան միջամտություն և պաշտպանություն, այլ տեղեկատվություն՝ համարժեքորեն վարվելու համար: Նման դեպքերում մասնագիտական աջակցությունը փորձագետի հետ համացանցային հաղորդակցման միջոցով շատ ցանկալի և հարմարավետ կլիներ՝ անանունության պահպանման պայմանով:

«Ի՞նչ վատ բան կա նրանում, որ կայքէջում գրում ես մասնագետին, տալիս ես քո ուզած հարցը, ու ինքը քեզ մասնագիտորեն պատասխանում է: Չեմ ասում՝ գրիր ու բողոքիր, ասում եմ՝ հարց տուր: Չես ուզենա՝ մի արա, ինչպես որ ասել են, բայց իմացի, որ սենց էլ կարելիա»:
Դպրոցական, ա.ս.

Երեխաների խոսքերով՝ իրենց իրավունքները հիմնականում խախտվում

են դպրոցում՝ ուսուցիչների կողմից ոչ համարժեք վերաբերմունքի, խոսելաոճի, պատժամիջոցների ընտրության, ինչպես նաև ավագ դպրոց տեղափոխվելուց՝ նոր դասարանում հայտնվելու և դժվարություններ ունենալու հետ կապված:

Երեխաների կողմից առանձին քննարկվել է արդեն նշված **ահաբեկումը /bullying/**՝ երեխաների կողմից միմյանց հալածելու, դասարանում առանձնացվողներին ճնշելու և անհանգստացնելու, առանձին աշակերտներին մեկուսացնելու երևույթը, որի դեպքում դրպոցի ղեկավարությունը հիմնականում կամ անտեղյակ են, կամ համարժեք միջոցներ չեն ձեռնարկում:

«Ես հաճախում եմ մի խմբակ, որտեղ կա մի աղջիկ, որին անընդհատ հալածում են ու ամեն օր լացացնում: Այդ աղջիկը դիմել է իր եղբորը, որպեսզի պաշտպանի: Իսկ ինչ վերաբերում է ուսմասվարին կամ դասղեկին, ապա աղջիկը իրենց չի կարող ասել, որովհետև քաշվում է»:
Դպրոցական, ի.ս.

«Սկզբից բարձր դասարանցիները կարող են գալ՝ քեզնից փող ուզել: Եթե տաս՝ մյուս անգամ կգան ավելի շատ փող կուզեն, կվերցնեն հեռախոսդ…»:
Դպրոցական, ա.ս.

Քննարկման արդյունքում պարզ դարձավ, որ դպրոցականների կողմից թույլերին հալածելու դեպքում հնարավոր է դիմել դպրոցի ղեկավարությանը, ինչը սակայն, ըստ երեխաների, գրեթե անիմաստ է: Ամենաշատը, ինչ կարող է տեղի ունենալ՝ մեղավորի հեռացումն է դպրոցից, որով հիմնահարցը չի լուծվում և տեղափոխվում է փողոց:

«Դպրոցից որևէ մեկի հեռացման համար պետք է երեք անգամ հայտարարեն նկատողություն: Մի անգամ հայտարարեն, երկու, մինչև երրորդը հայտարարեն՝ այդ երեխային դա արդեն կարող է հալածելով սպանել: **Պետքա նենց մարմին լինի, որ միանգամից լուծում տա**»:
Դպրոցական, ա.ս.

Երեխաների՝ միմյանց հանդեպ կիրառվող բռնության կանխարգելման

առումով դպրոցների ղեկավարության թույլ և անտարբեր /անտեղյակ/ դիրքորոշման հետևանքներից է, որ երեխաները դպրոցում պաշտպանված լինելու համար հիմնականում դիմում եմ սեփական ընկերական միջավայրին: Այսպես, երեխաների խոսքերով, տղաները հիմնականում ստեղծում են իրենց ընկերական /«եղբայրական»/ շրջապատը՝ միմյանց շահերը նաև ուժային մեթոդներով պաշտպանելու համար, ինչը նաև այլոց հանդեպ բռնության պատճառ է դառնում: Ինչ վերաբերում է աղջիկներին, ապա ոմանք նույնպես փորձում են շփվել դպրոցում վերոնշյալ իմաստով «հեղինակավոր» տղաների հետ՝ իրենց կողմից պաշտպանվածություն ունենալու նպատակով: Միևնույն ժամանակ, երեխաների վկայությամբ, այս ճանապարհը նույնպես ռիսկային է:

«Թող այն աղջիկները, որոնք ընկերություն են անում ինչ-որ հեղինակություն ունեցող տղայի հետ և մյուս տղեքի պես իրեն «իմ եղբայրն» է անվանում, չմտածեն, որ այդ տղեն իրենից ոչինչ չի ուզում ու անշահախնդիր կպաշտպանի»:
Դպրոցական, ի.ս.

Երեխաների կարծիքով, իրենք հիմնականում ունեն հոգեբանի, ինչպես նաև երեխաների իրավունքների գծով մասնագետների խորհրդի կարիքը:

«Պետք է, որ այդ մասնագետին դիմելով՝ ինքը մեզ ասի մեր իրավունքները, և բացատրի պարտականությունները, որպեսզի հասկանանք՝ մեզնից ինչ են ուզում»:
Դպրոցական, ա.ս.

Միևնույն ժամանակ, մասնագետին երեխաների դիմելը, իրենց կարծիքով, խոչընդոտված է հայաստանյան հասարակության մեջ առկա կարծրատիպերով:

«Ես մի քանի տարի ապրել եմ Հունաստանում, այնտեղ յուրաքանչյուր դպրոցում կա հոգեբան, որը քեզ հետ մշտապես շփվում է, քեզ աջակցում, խորհուրդներ տալիս: Իրենց մոտ երեխան փոքրուց գիտի, որ կա հոգեբան,

որին կարելի է դիմել դժվար իրավիճակներում»:
Դպրոցական, ա.ս.
«Դու պատկերացրու, եթե ես գնամ հոգեբանի մոտ, և այդ մասին դասարանում իմանան, կասեն՝ հոգեկան հիվանդ եմ»:
Դպրոցական, ի.ս.

Խոսելով այն մասին, թե արդյոք բողոքելը և հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվություն հաղորդելը հայաստանյան հասարակության մեջ առկա կարծրատիպային ընկալումների տեսակետից ընդունելի և խրախուսելի վարք է, երեխաների մի մասը մտավախություն են հայտնել, որ բնակչության ստվար հատված չի բողոքելու՝ անկախ ամեն ինչից: Այս իմաստով անանունությունը, բողոքելու մեխանիզմների մատչելիությունը կարող են նպաստել նման մարդկանց թվի փոքրացմանը: Այսպես, դրպոցներում բողոքելու համար նախատեսված արկղերի տեղադրման դեպքում, երեխաների կարծիքով, բողոք և տեղեկատվություն ներկայացնելը դժվար է և քիչ արդյունավետ, քանի որ բողոքող երեխան կարող է մտածել, որ իրեն հետևում են, ինչպես նաև դպրոցի ղեկավարությունը պարբերաբար կստուգի արկղի պարունակությունն ու բողոքներում արձանագրված հիմնախնդիրներին լուծում տալու փոխարեն հակված կլինի պատժել բողոքողին:

Միևնույն ժամանակ, երեխաներից ոմանք ընգծել են հիմնախնդիրները քննարկելու անհրաժեշտությունը՝ որպես դրանց լուծմանը նպաստող եղանակ:

«Նախքան հիմնախնդրի մասին բողոք ներկայացնելը՝ այն պետք է քննարկել խնդիրը ստեղծողի հետ: Օրինակ, եթե երեխաները դժգոհ են իրենց ուսուցչի վերաբերմունքից, դա պետք է քննարկել հենց ուսուցչի հետ, ներառել նաև դպրոցի ղեկավարությանը: Պրոբլեմների մասին պետք է բարձրաձայն խոսել, թե չէ դրանք չեն լուծվի, ինչպես ասում են, “ներքին խոհանոցում” կարգավորել: Միայն եթե այդպես խնդիրը չլուծվեց, ապա դրանից հետո կարելի է այդ մասին բողոքել, օրինակ՝ Կրթության նախարարությանը»:
Դպրոցական, ի.ս.

Վերոնշյալը հաշվի առնելով՝ երեխաներն առաջարկեցին տվյալ մասնագետին անվանել **«ԽՈՐՀՐԴԱՏՈՒ»**՝ «մեկը, որին վստահում ես և կարող

ես մասնագիտական աջակցության համար դիմել»[81]:

Երեխաներն առանձնացրեցին «Խորհրդատուի»՝ իրենց հետ աշխատող և վստահելի մասնագետի /կառույցի, մասնագետների/ ցանկալի հավաքական կերպարը. պետք է լինի 30-35 տարեկան /որպեսզի երեխաներն իր հետ հանգիստ շփվեն/, ժամանակակից, հանգիստ և համբերատար, երեխաների հոգեբանությունը հասկացող և երեխաների հետ սիրով աշխատող, ավելի շուտ կին, քան տղամարդ: պաշտպանի կայքէջում պետք է լինի խորհրդատու-մասնագետների լուսանկարները, իրենց մասին այլոց գրավոր կարծիքները, որպեսզի դիմողը կարողական վստահել և կողմնորոշվել՝ դիմելու հարցում:

Երեխաները նշեցին նաև, որ կայքէջով գրավոր բողոքելուց բացի՝ անպայման պետք է լինի վստահության հեռախոսահամար: Օրինակ՝ փողոցում որևէ միջադեպի դեպքում անհրաժեշտ է անմիջապես զանգել, և ժամանակ չկորցնել՝ համացանցից օգտվելու վրա:

Քննարկումներին մասնակցած երեխաներին հատկապես հուզում է տարաբնույթ փակ հաստատություններում իրենց հասակակիցների վիճակը և վատ վերաբերմունքի դեպքում բողոքելու սահմանափակ հնարավորությունները: Երեխաները մտավախություն հայտնեցին, որ փակ հաստատությունում գտնվողները կարող են զրկված լինել համացացից օգտվելուց, չկարողանան դիմել Մարդու իրավունքների պաշտպանին կայքէջի միջոցով, ինչպես նաև զրկված լինեն հեռախոսազանգերի ազատ հնարավորություններից և չկարողանան զանգահարել թեժ գիծ: Այս ամենը երեխաներն արդեն դիտարկել են որպես փակ հաստատություններում իրենց հասակակիցների իրավունքների խախտում: Միևնույն ժամանակ, կարևորվեց այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչները կարող են անարգել մուտք գործել նման կառույցներ՝ կանխարգելիչ և ստուգիչ այցերի, դրանց ընթացքում երեխաների իրավունքների խախտումներն ու ռիսկերը բացահայտելու նպատակով:

---

[81] Ի տարբերություն «Մարդու իրավունքների պաշտպան» կամ «Օմբուդսման» անվանումների, որոնք երեխաները բազում անգամ լսելուց հետո անգամ դժվար էին արտաբերում, իրենց համար «Խորհրդատու» անվանումը ամբողջովին ընկալելի է, վստահություն է ներշնչում և թույլ է տալիս խուսափելու «բողոքողի» դերում հայտնվելու, կամ հոգեբանի աջակցությանը դիմելու դեպքում որպես «հոգեկան հիվանդ» ընկալվելու կարծրատիպային հետևանքներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, **Հայաստանում երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առաջընթացի ապահովումը ենթադրում է ազգային արժեքների հենքով երեխաների՝ ընտանիքում ապրելու, սիրո և հոգատարության պայմաններում մեծանալու, իրենց կարիքների առումով լսված լինելու, իսկ իրավունքների խախտման դեպքում՝ բողոքելու դյուրին հնարավորություններ ունենալու համար բոլոր անհրաժեշտ նախապայմանների ապահովումը:**

Վերոնշյալ նպատակներին ուղղված՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ջանքերը կկենտրոնացվեն երեխաների հիմնական սոցիալական միջավայրում, այդ թվում՝ հանրակրթական և հատկապես փակ տիպի հաստատություններում երեխաների պաշտպանվածության համար անհրաժեշտ մեխանիզմների ստեղծման վրա: Երեխայի իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսակետից կարևոր նշանակություն ունեն երեխաների իրավունքների խախտումների վերաբերյալ և հատկապես հենց երեխաների հաղորդած տեղեկությունները, ինչը բխում է երեխաների՝ լսված լինելու իրավունքից: Երեխաների՝ Պաշտպանի աշխատակազմի հետ հաղորդակցման, հարցադրումներով հանդես գալու և հարցեր բարձրացնելու մեխանիզմների կատարելագործումը կնպաստի Պաշտպանի կողմից իրականացվող գործողությունների հասցեականության, արագության և արդյունավետության բարձրացմանը:

Այսպիսով, հաշվի առնելով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության փորձը, երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում միջազգային արդյունավետ փորձի ուսումնասիրությունն ու կարիքների գնահատումը՝ անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

- ✓ Պետք է կիրառել երեխաների կողմից բողոքների ներկայացման ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի մեխանիզմներ՝ հայաստանյան առանձնահատկությունների հաշվառմամբ: Ուղղակի մեխանիզմներից է անմիջական փաստահավաք գործունեությունը, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից բողոքների և հարցերի անմիջական ընդունումը, այդ թվում՝ Պաշտպանի կայքէջում երեխաների համար դյուրին, ինտերակտիվ պատուհանի տեղադրման միջոցով: Երեխաներին առնչվող

դիմումների ընդունումը կայքէջի միջոցով պետք է իրականացվի միջազգային արդյունավետ փորձի հաշվառմամբ՝ ներառյալ կայքէջի ձևավորումը, դյուրին հաղորդակցումը, վստահության ներշնչումը: Երեխաների հետ հարաբերություններում պետք է օգտագործվեն նրանց հետ հաղորդակցումը դյուրին դարձնող կարգախոսներ, պատկերներ, իրենց պատկերացումներում վստահելի մարդուն հատուկ հատկություններով օժտված մասնագետներ:

- ✓ Անհրաժեշտ է հատուկ շեշտադրել փակ տիպի հաստատություններում գտնվող երեխաների՝ Պաշտպանի աշխատակազմի հետ հաղորդակցման ապահովումն ու դյուրին դարձնելը: Մշտապես կծրագրավորվեն և կիրականացվեն երեխաների համար նախատեսված փակ տիպի հաստատություններ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի մասնագետների ստուգող այցեր՝ համագործակցելով այս ոլորտի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:
- ✓ Անհրաժեշտ է շարունակել աշխատանքներ՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի վստահության հեռախոսի վերաբերյալ տեղեկությունների տարածման, երեխաների և նրանց պաշտպանող անձանց և կառույցների համար այն Պաշտպանի հետ հաղորդակցման վստահելի միջոց դարձնելու ուղղությամբ:
- ✓ Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային փորձը միջնորդավորված եղանակով, այն է՝ շահագրգիռ կողմերի ներառմամբ, հասարակական տարբեր կազմակերպությունների և փորձագետների ակտիվ ներգրավմամբ, նույնպես կարող է նպաստել Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության հետագա բարելավմանը: Սա հատկապես վերաբերում է փակ հաստատություններում երեխաների իրավունքների պաշտպանությանը, որի համար մշակվող մեխանիզմը պետք է միավորի պետական և քաղաքացիական հասարակության մարմինների ջանքերը:
- ✓ Երեխաների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացման նպատակով այդ ոլորտում արդյունավետ պատմություն ունեցող երկրների փորձի հիման վրա պետք է կատարելագործել երեխաների իրավունքների պաշտպանության համակարգը, ինչպես նաև մշտապես իրականացնել փորձի փոխանակում:

- ✓ Պետք է շարունակաբար կազմակերպել Երևանի և հատկապես մարզերի դպրոցականների ճանաչողական այցերը Պաշտպանի աշխատակազմ, Պաշտպանի և իր աշխատակազմի համապատասխան ներկայացուցիչների հետ անմիջական հանդիպումների ընթացքում քննարկել երեխաների համար արդիական հարցեր, դուրս բերել առկա հիմնախնդիրներ, ինչը կնպաստի երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում փաստահավաք գործունեության ընդլայնմանն ու առկա հիմնահարցերի կարգավորմանը:
- ✓ Անչափահասների կողմից միմյանց հանդեպ իրականացվող բռնությունն ու հալածանքը /bullying/ երեխաներին շրջապատող սոցիալական միջավայրի բացասական ազդեցության (ընտանեկան ոչ ճիշտ դաստիարակություն, դպրոցների աշխատակազմի անտարբերություն և անփութություն, ՁԼՄ-ի բացասական ազդեցություն) հետևանքն են և պահանջում են հրատապ լուծումներ: Ներկայում այդ ուղղությամբ ՀՀ-ում տարվող աշխատանքները չունեն համակարգված բնույթ և ձեռնարկվում են առավելապես առանձին հասարակական կազմակերպությունների կողմից: Տվյալ խնդիրն ու դրանց լուծմանն ուղղված քայլերը ներառվելու են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության առաջնահերթությունների շարքում:
- ✓ Պաշտպանի հաստատության՝ որպես երեխաների համար «խորհրդատուի» դերի ձևավորումը կընդլայնի երեխաների հետ հաղորդակցման տիրույթն ու իրավունքների ուղղակի պաշտպանության գործառույթից զատ կներառի նաև սոցիալ-հոգեբանական բնույթի խորհրդատվություն և աջակցություն՝ հաշվի առնելով երեխաների և պատանիների տարիքային ու սեռային հոգեբանական առանձնահատկությունները: